

1042

6. Inf/young /single

Acceptance / quick Sharp / quality
/ quality separate / separate

upward W.

6. 1928

9(1)

9-88

№ 1 ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՋ. ԴՊՐ. ԳՐԱԴԱՐԱՆ
ԴԱՐԵՐ ՅԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ № 1

ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՍԿԻ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԻՑ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՊՐԱԿ Ա.

Փոխադրություն ռուսերենից ՅԵ. ԼՍ.ԼՍ.ՅԱՆԻ

Գ. հրատարակություն

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1928

30 MAY 2011

13 APR 2011

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃ. ԴՊՐ. ԳՐԱԴԱՐԱՆ
№ 1 ԴԱՐԵՐ ՅԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ № 1

15 JUL 2005

1)
88 ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՍԿԻ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԻՑ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՊՐԱԿ Ա.

Փոխադրությունը ուղարկեց ՅԵ. Լ. Ս. Լ. Ս. Յ. Ն. Ի.

Գ. ՎԵՐԱՄՇԱԿԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՆԵՐՈՒՄ

ՅԵՐԵՎԱՆ-1928

13 APR 2013

1042



2920 87

№ 547

Գրառեպար № 784 (P)

Տիրաժ 4000

Պետհրատի տուժին տպարանի վաղարշապատում

ԱՌՍՋԻՆ ՄԱՍ.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԻՑ ՊԱՏԿԵՐՆԵՐ.

1. ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ.

Վաղ առավոտ ե: Քաղաքում, շուկայի հրապարակի վրա շատ մարդիկ են խոնվել: Ամեն կողմից դեպի հրապարակն են շտապում տանտիկիները: Ամեն մինը ձեռքին մի փոքրիկ զամբյուղ ունի գնումների համար, իսկ գնել շուկայում կարելի չէ՝ ինչ-ժոր հարկավոր ե: Բանջարեղենի, նարեղենի և մսի միջանի խանութներ լի չեն զանազան բարիքներով:

Շրջակայքի գյուղացիները 10—20 վերստ հեռավորությունից բերել են քաղաքի շուկան գետնախնձոր, կաղամբ, մորթած թռչուններ, մսի բղեր: Սանտապաններն ու գյուղացիներն իրար գլուխ պատռելով իրենց մոտ են կանչում գնորդներին: Հրապարակում լրարանցում և աղմուկ է տիրում: Տեղ-տեղ լսվում են հայոցանք և սուր խոսակցություն: Սանտապաններում և սալերի մոտ տաք առևտուր է տեղի ունենում:

Ամեն մի տանտիկին գնում է այնքան, վոր-

քան հարկավոր ե այդ որվա ճաշի համա : Մի-
այն շատ քչիւն են գնում չերկու-չերեք որվա
համար: Մեծ պատրաստութիւն տեսնելու կա-
րիք չկա չե՞ վոր խանութներն ամեն որ բաց
են: Մեկ էլ՝ շաբաթը չերկու չերեք անգամ գլու-
ղացիները շուկա չեն բերում պարտիզի բանջա-
րէ գիններ և թռչուններ: Ուրեմն, միշտ ել կա-
րելի չե գնել՝ ինչ-վոր հարկավոր ե, միայն թե
փող լինի:

Այսպես չեն ապրում գլուղում: Այնտեղ չկան
ամենօրյա շուկաներ, ուր կարելի լիներ միս և
բանջարեղեն գնել: Մեկ էլ՝ գլուղացին այդպիսի
գնումների համար միշտ փող չի ունենում: Բայց
սա փոխարեն ամեն մի գլուղացի գոնե մի
փոքրիկ պարտեզ և վարելահող ունի: Նա մշա-
կում ե վարելահողը և աշնանը զանազան տեսակ
պաշարեղեն հավաքում:

Շատ չեն այս պաշարեղենները, սակայն ապ-
րեցնում են գերդաստանին մինչև նոր հունձը:


Այժմ այսպես են ապրում բազմաթիւներն
ու գլուղացիները: Բայց չէ՞ղի ե մի ժամանակ,
շատ հազարավոր տարիներ առաջ, չերբ բոլոր-
վին չեն չէղի քաղաքներ՝ շուկաներով և խա-
նութներով, չեն չէղի նաև գլուղեր՝ պարտեզ-
ներով և արտերով: Բայց այսպես մարդիկ այդ
ժամանակն ել են ապրել, իրենք կերակրվել և

կերակրել իրենց չերեխաներին: Նրանք չեն իմա-
ցել հողը մշակել, կերակուր պատրաստել, հա-
գուստ կարել: Նրանք վոչ մի գործիք չեն ունե-
ցել: Վերև հիշածներից վոչինչ չեն իմացել և
չեն ել արել, բայց և այնպես ապրել են: Սա-
կայն լինչպէս են սրանք, այս նախնական վաչ-
րենի մարդիկ, իրենց համար կերակուր ճարել:

2. ԽՈՐ ԱՆՑՅԱԼՈՒՄ.

Պայծառ արեւ ջերմութեամբ ե լուսով վողո-
ղում ե անտառը, վորի մոտով հոսում ե փոքրիկ,
արագընթաց գետակը: Անտառը տեղ-տեղ հաս-
նում ե մինչև գետափը, տեղ-տեղ հեռանում
նրանից. և հաս այգալիսի տեղերում բացվում
են զվարթ, կանաչ մարգագետիններ, թռչուննե-
րը թռչկոտում են ճյուղից-ճյուղ և ողը խլաց-
նում բազմազան ճովողչունով: Վոչ մի տեղ
բնակութեան հետքեր չեն չերեում: Հանկարծ մի
մարգագետնի ծայրում թռչունները հուզված ճի-
չով վերև թռան: Սրանց չետից անտառից դուրս
չեկան մի տեսակ ոտաքոտի եղաններ. թե մարդ
ասես, մարդ չեն, թե գազան ասես, գազան չեն:
Ահա նրանք տեղավորվեցին մարգագետնում:
Այժմ կարելի չե նրանց լավ տեսնել և հասկա-
նալ, վոր մարդիկ են և վոչ գազաններ: Առաջից
գնում եր չերկար մագերով մի ամրակազմ տղա-

մարդ, ճշուղապատ մահակը ձեռին: Տղամարդու լետեից քաշ եր գալիս մի կին, փոքրիկ չերե-



Նկ 1. Նախնական մարդիկ:

խան գրկում: Սրանք նախնական մարդիկ էլին: Արդեն միքանի ժամ ե, ինչ նրանք թափա-

սում էլին անտառում՝ բւտեատ փորոնելով: Որն անհաջող եր չեղել, և ուտելու շատ քիչ բան եր պատահել: Սրանք մոտեցան գետակին. տղամարդն սկսեց մահակով և ձեռքով բշփորել թփերի և խոտերի մեջ. կինը մերկ չերեխային դրել եր գետնին և ոգնում եր տղամարդուն՝ վորոնումներ ա՛ ելու: Յերեխան սաստիկ լաց եր լինում՝ անուժ թպրտալով խոտերի մեջ: Բայց ծնողներն ուշադրութուն չեյին դարձնում նրա աղաղակին: Նրանք փորփրում էլին գետինը, արմատներ էլին հանում և միջատների թրթուրներ ժողովում: Արմատներից միջանիսի համը տեանելուց հետո դեն էլին շպրտում, իսկ մնացածն ազահուլթյամբ ուտում էլին: Բայց անա տղամարդը հանկարծ ուղղվեց, սաստիկ բղավեց և սկսեց մահակով խփել խոտերին: Հետո կռացավ և ձեռքով բարձրացրեց մի մեծ ոձ: Նա տափներով և ձեռքերով նրան լերկու կտոր արավ: Մի կտորը պահեց իրեն, մյուսը տվեց կնոջը: Մի բոպելում մարդ ու կին կերան, մաքրազարդեցին ամբողջ ոձը:

Հետագա վորոնումները նույնպես հաջող անցան: Կինը միքանի մողես բռնեց, մացառուտում գտնվեցին ճաշակելի բավականաչափ պտուղներ: Այսպես՝ այս ընտանիքը կուշտ կերավ, կշտացավ և հենց այդտեղ ել մարգագետնի վրա պառկեց

հանգստանալու: Ինչն սկսեց չերեխալին ծիծառ: Նրա կողքին մեջքի վրա պառկեց աղամարդը՝ մահակն իր կողքին դնելով: Տաք երբաց վոչ շոգ. շուտով այդ դո՛հ և կուշտ վալրենիները խոր քնի մեջ ընկղմվեցին:

Անցել եր մի չերկու ժամ: Մարդիկ խաղաղ հանգստանում ելին, չսպասելով վոչ մի զժբախտության, սակայն զժբախտությունը մոտ եր: Անտառի թավուտից կամացուկ դուրս չեկավ մի ահագին դազան, վոր տեսքով վազրի չեր նման: Նա քթով ողբ հոտոտեց, և նրա աչքերը փայլատակեցին. գազանն զգաց, վոր վորս կա Նա ընկավ փորի վրա և զգուշությամբ սողաց դեպի քնած մարդիկ: Սրանցից միքանի բալ հեռու նա կանգ առավ: Նրա վառ աչքերը հառած նայում ելին առաջ: Այդ բոպելին կարծես թե մինը հրեց քնած մարդուն. Նա արագությամբ տեղից բարձրացավ, իսկույն նկատեց թշնամուն, խլեց մահակը և սուր ճիչով վտաքի կանգնեց: Գազանը վրա թռավ, մարդը խույս տվեց և մահակով հարվածեց նրա գլխին: Գազանը ցավից մռնչաց և նորից հարձակվեց վորսի վրա: Այս անգամ հարձակումը հաջող եր. թշնամիներն ընկան գետին: Մարդու խուլոտ աղաղակը միախառնվում եր գազանի մռնչյունին: Մարդն արիարար պաշտպանվում եր: Նա պատահաբար

նին իր ուժեղ ձեռքերով, կրծքում եր ատամներով: Սակայն ուժերը չափազանց անհավասար ելին: Գազանը հաղթեց և սկսեց պատառ-պատառ անել իր վորսին: Իսկ այդ միջոցին կինն արդեն շատ հեռու չեր գտնվում: Աղմուկի հենց սկզբից նա գրկեց չերեխալին և փախավ անտառի խորքը: Այնտեղ նա գիտեր մի ապահով տեղ— մի մեծ ծառի խոռոչ: Այս խոռոչը ծառայում եր մարդկանց վորպես բնակարան: Այդտեղ ել նա պահվեց իր չերեխալի հետ: Այսպես եր նախնական մարդկանց կյանքը, չերբ գեռես կրակ անել չգիտեյին և, բացի մահակից, ուրիշ զենք չունեյին:

3. ԿՐԱԿԻՆ ՏԻՐԵԼԸ:

«Այս պատահել ե շատ հին ժամանակ,— սկսեց իր պատմությունը ծեր ալեուտը*, վոր անցել եր Ամերիկայի ամբողջ հյուսիսային մասը, — ինչպես այժմ հնումն ել չերկրիս վրա մարդիկ ելին ապրում: Միայն նրանք վատ ելին ապրում: Յերեխաները մեռնում ելին գիշատիչ թռչունների ճիրաններում, մեծերին պատահաբար ևլին գազանները, և բոլորը տանջվում ելին բաղցից ու ցրտից:

«Վատ եր ապրում մարդն այդ հին, անցյալ

* Ալեուտ — Հյուսիսային Ամերիկայում ապրող վալրենի ժողովուրդ:

ժամանակներում: Նա անապատտան եր, ինչպես
գայլը, անուգնական՝ ինչպես ճիճուն. և ամենքը
նեղացնում էին նրան: Միայն մի ապաստարան
ուներ մարդը.— թշնամիներից նա թագ եր կենում
ժայռերի միջև չեղած ճեղքերում և մեծ ծառերի
սաղարթների մեջ: Սակայն ժայռերի մեջ էլ
գտնում էին մարդկանց ագահ գազանները, և
ծառերի սաղարթներում բռնում էին նրանց
գիշատիչ թռչունները: Յեւ միայն մի ելակ խղ-
ճում եր մարդկանց և ցավում նրանց վրա: Այդ
սև ագռավն եր, հրաշալի էլ. Ագռավը:

«Յերկա, տարիներ նա նայում եր ժայռի
վրայից մարդկանց վատ կյանքին և չէր իմանում,
թե ինչով ոգնի նրանց: Ագռավն իր ամբողջ
կյանքում վորոնում եր այն ուժը, վորով մարդը
պիտի կարողանար հաղթել իր թշնամիներին:
Վերջապես ծերության որերին ելը գտավ իր
այդ վորոնածը: Ագռավը մտաբերեց, վոր շատ
հեռուն, արևելքում, Խաղաղ ովկիանոսի մեջտե-
ղում, միայնակ կանգնած մի կղզի կա, վորի վրա
բարձրանում ե մի զարհուրելի լեռ, ծիրանա-
գույն հավերժական թագը գլխին և կրակ ե
շնչում: Շատ դժվար եր վորոնել, գտնել այդ
կղզին, վորովհետև նա գիշեր-ցերեկ ծածկված
եր մարդկանց աչքերից մոխրագույն մշուշի վա-
րագուրով:

«Ել. Ագռավը ծերության որերում մարդկանց
ուգնելու հուսով թռավ հեռավոր, անաեսանելի
չերկրներ՝ վորոնելու խորհրդավոր կղզին: Ագ-
ռավը չերկար թռավ ովկիանոսի վրայով, չերկար
վիճեց ծովի սառն ալիքների վրա փչող ու-
ժեղ քամիների հետ: Միմիայն մարդկանց տան-
ջանքի կարեկցութունն եր, վոր ամբողջ եր նրա
ուժերը, նրանց տխուր կյանքը թեթևացնելու
ցանկութունն ուժեղացնում եր նրա չեռանդը:
Յեւ անա ծովային խիստ քամին փոխարինվեց
մեռելային լուսթյամբ, և մոխրագույն մշուշն
անթափանցիկ ամպով կախվեց ծովի վրա: Սա-
կայն էլ. Ագռավը կանգ չառավ մշուշային մառա-
խուղի մեջ և շարունակեց իր վորոնումները:

«Հանկարծ ելի ականջին դիպչում ե ծովի
կատաղի պճպճոցը: Նա արագությամբ իջավ
ներքև և անսրացած մշուշի միջից տեսավ զար-
հուրելի լեռան ծիրանագույն թագը. նրա շուրջը
սպիտակ շերտով պճպճում եր շուրք: Ելը ծի-
ծեռնակի պես բարձրացավ լեռան վրա, թռչելով
վերջից նրա գագաթից բոցավառ ամուխը և
չեռ դարձավ:

Ագռավն ամենայն ուժով սլանում ե. Նա
աշխատում ե տանել բոցավառ ամուխը մինչև
ափը և տալ մարդկանց կրակը: Սակայն տանեյն
ավելի դժվար եր, քան գտնելը: Ծովային քամին

բորբոքում եր բոցը և վառում կտուցը: Մաշող ծուխը կուրացնում եր աչքերը և ստիպում Ագռավին թափել արցունք արցունքի չեռից ծովի սառն ալիքների մեջ: Վառվող կտուցի տանջող ցավը մաշում եր մարմինը, իսկ հոգնած թևերը հրաժարվում ելին ծառայել: Յեվ միայն տանջվող մարդկանց ոգնելու միակ ցանկությունը քշում եր ելի դիտից բոցավառ ածուխը դեն շարտելու միտքը: Վերջապես ագռավը լարեց իր վերջին ուժերը և սլացավ ամենայն արագությամբ:

Հագիվ հրաշալի ելը կարողացավ հասնել ափին, չեքք նրա ալրված կտուցը պրծավ և իր բեռի հետ ընկավ գետին: Ածուխը գետին հասած՝ հանգավ, միայն նրանից վոսկեշող կայծեր թափվեցին քարերի և ծառերի վրա և կորան նրանց մեջ: Իսկ տանջված ագռավն ընկավ իր բեռի չեռից և մեռավ»:

Ալեուտ ծերունին փոքր ինչ լռեց և հետո հառաչելով՝ ասաց.

«Ահա այսպես մեռավ մարդկանց համար հրաշալի ել-Ագռավը: Սակայն նա կարողացավ անել ցանկացածը: Մարդիկ տեսան, թե ինչպես ածուխից կայծեր թափվեցին և կորան քարերի և ծառերի մեջ: Նրանք սկսեցին ձեռք բերել այդ կայծերը քարը քարին խփելով և փայտը

փայտին քսելով: Բորբոքելով կայծերը՝ նրանք կրակ արին, խարուչկ վառեցին: Կրակն սկսեց տաքացնել նրանց վատ չեղանակին, պաշտպանել թշնամիներից: Հրաշալի Ագռավը մեռնելով՝ բերեց մարդկանց ինչ վոր կամենում եր՝ անպարտելի զենք և հավատարիմ բարեկամ: Ահա թե ինչպես ե չեղել ել-Ագռավը, — ավարտեց իր պատմությունը ալեուտ ծերունին, վոր անցել եր Ամերիկայի ամբողջ հյուսիսային մասը:

Ալեուտների մեջ բերնե-բերան անցած այս հեքիաթում շատ մտացածին բաներ կան: Միայն ճշմարիտ ե այն, վոր չեղել ե մի ժամանակ, չեքք մարդիկ չեն իմացել, թե կրակն ինչ ե: Մարդիկ տեսնում եին կայծակը չերկնքում, տեսնում եին անտառի հրդեհները, վոր առաջանում եին կայծակից, բայց իրենք վախենում եին կրակից: Շատ ժամանակ եր հարկավոր, վոր մարդն ընտելանար կրակին և ալևս նրանից չվախենար:

Ավելի խելահասները տանում ելին անտառի հրդեհից խանձողներ և խարուչկներ վառում: Բայց հաճախ պատահում եր, վոր կրակը հանգչում եր: Այդ ժամանակներում բոլոր չափահասները գնում ելին ուտեստ վորոնելու, իսկ խարուչի պահպանությունը հանձնում ելին չերեխաներին: Պատահում եր, վոր չերեխաները խաղով ելին ընկնում և մոռանում ելին խարուչի վրա փայտ

դնել, և մարդիկ մոտ Ելին տառնց կրակի, ինչպես ձեռք բերել՝ չգիտեցին:



Դեպքը նրանց սովորեցրեց: Նրանք նկատե-

Նկար 2. Վայրենիները կրակ են անում:

ախարհի կայծեր են չերևում, վորպիսիներ առկայծում են խարուչկից. նրանք նկատեցին նույնպես, վոր, չերբ փայտե կոթի մեջ ծակ ելին ուղղում բանալ կացնի համար, փայտը տաքանում եր և նույնիսկ վառվում: Այսպիսի դեպքերը մարդկանց այն միտքը ներշնչեցին, վոր իրենք կարող են կրակ անել: Յեվ հիրավի, ըսկրսեցին անել. կրակ ելին հանում քարը քարին խփելով կամ մի սրածայր փայտ մի ուրիշ փայտի վրա պատեցնելով՝ մինչև վոր կվառվեր:

Սկզբում մարդը միայն պահապանն եր այն կրակի, վոր ընկել եր չերկնքից. այժմ նա տեր ե կրակին, կարող ե անել՝ չերբ ուղենա: Կրակին տիրելը մարդկանց անթիվ բարիքներ տվեց:

Կրակը չերկարացրեց մարդկանց համար ժամանակը. նա նրանց համախմբեց: Նրանք չերեկոները հավաքվում ելին կրակի շուրջը և մի վորևե գործով զբաղվում, զանազան գործիքներ շինում, հանդերձ, զարդարանք պատրաստում: Վառվող խոնձորը մարդու ձեռքում դարձավ ամենահուսալի զենքը գիշակեր գաղանների դեմ: Քարայրի առջև վառված խարուչիլը պաշտպանում եր մարդկանց չորքոտանի թշնամիներից:

Մարդիկ սովորեցին կրակի վրա կերակուր պատրաստել — փափկացնել, խորովել, չեփել:

Դրանից առաջ մարդիկ, մինչև անգամ չերեխաները, նույնիսկ մանկիկներն, ստիպված էին հում կերակրով բավականանալ:

Կրակն ազատեց մարդկանց կլիմայի նախկին տիրապետությունից: Սարույկը տաքացում էր նրանց ցուրտ չեղանակին: Կրակը հնարավորություն տվեց ցուրտ չերկրներում բնակվելու:

Այժմ մեզ համար շատ հեշտ բան է կրակն անելը: Բավական է վերցնենք մի տուփ լուցկի կամ ինքնավառ (зажигалка), և միքանի վալը՝ կյանից կրակը կպլպլա մեր ձեռքում: Սակայն հիմա չեմ վալրենի և կիսավալրենի մարդիկ կան ինչպես, որինակ, ալեռաները, վորոնք կրակ են անում փայլար փայտին քսելով: Կրակ անելու ուրիշ միջոց նրանք չգիտեն, ինչպես չգիտելին մի ժամանակ և մեր հեռավոր նախնիքը: Առանց կ ալի տիրապետության մարդիկ չեյին կարող դուրս գալ իրենց նախնական գրությունից:


4. ՀԻՍՈՒՆ ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ԴԵՊԻ ՅԵՏ.

Հրաճալի գլուխ. — Ժայռի գեպի դուրս ցցված մասում նստած եյին չերկու նախնական մարդ մի տղամարդ՝ Ուգ-Լոմի և մի կին՝ Յուգենա: Դրանք դեռահաս, ուժեղ և ճարպիկ վալրենիներ էին:

Յերեկ նրանց հաջողվել էր մի մեծ վառարկից փուսափել: Նրանց չեռերից ընկել էին իրենց թշնամի, նույնպիսի վալրենի մարդիկ և սպառնում էին անողորմ մահ: Քիչ էր մնացել, վոր թշնամիները հասնելին նրանց: Մինչև անգամ Յուգենան վոտից սաստիկ վիրավորվել էր քարով, բայց և այնպես բախտ էր ունեցել փախչելու:

Այժմ Ուգ-Լոմին և Յուգենան հանգստանում էին: Նրանք ուրախ էին, վոր կարողացել էին փախչել: Ուրախ էին նաև, վոր քարով սպանել էին մի սկյուռ և նրանով լավ կշտացել:

Յուգենայի վիրավորված վոտն այնպես փայտացել էր, վոր ստիպված էր չիդել ամբողջ որը պառկած անցկացնել: Ուգ-Լոմին էլ մնացել էր մոտը: Ահա այս ժամանակ ժայռի վրա նա նկատեց մեծ, ցցված կալծբարեր, այնքան մեծ, վորպիսին դեռ կյանքում չեր տեսել: Նա հանեց նրանցից միքանիսը և սկսեց տաշաշել. վորպեսզի թշնամիների նոր հարձակման դեպքում զենք ունենա պաշտպանվելու: Զոկելով կալծբարերը, միևի վրա մի կուշտ ծիծաղեց: Յուգենան նույնպես ծիծաղեց և նրանք խաղալով միմյանց ձգեցին այն: Այդ կալծբարի մեջ մի ծակ կար: Նրանք անց էին կացնում մասներն այդ ծակի մեջ և հանաքներ անում: Հեռու նրանք սկսեցին



այդ ծակի միջով իրար նայել: Մեկ ել հանկարծ մի փայտ վերցրին, և սկսեցին նրանով շարժել այս անհեղեղ կայծքարը: Ուգ-Լոմին կանկարծ փայտը կոխեց ծակի մեջ և տեսավ, վոր այլևս դուրս չի գալիս: Այս նրան փոքր ինչ դարմացրեց և նուշիսկ վախեցրեց, այնպես վոր մի առ ժամանակ դադարեց նրան ձեռք տալուց: Նրան թվում եր, թե կայծքարը կծել ե փայտին և ատամներով ամուր բռնել: Բայց հետո ընտելացավ այս տարորինակ յերևույթին: Նա սկսեց շարժումներ անել այդ փայտով և նկատեց, վոր դա, ունենալով ծայրին ծանր. կայծքար, ավելի լավ հարվածներ ե տալիս, քան իր ունեցած բոլոր զենքերը: Նա ուրախ-ուրախ առաջ ու յետ եր գնում և փայտով շարժումներ անում և խփում ինչի վոր պատահում եր: Վերջապես նա սրանից ձանձրացավ և դեն ձգեց:

Թեև Ուգ-Լոմին դեն ձգեց իր դարմանալի կայծքարը, սակայն նրան չմոռացավ: Հաջորդորը նա նորից վերցրեց այն և սկսեց սրել: Այս անելով՝ նա, ըստ յերևույթին, կենտրոնացած մտածում եր: Սրած ծայրով զենքը նրան ավելի ևս դուր եր գալիս: Հետո վերցրեց ճագարի կաշու յերիպներ և կապեց կայծքարի փայտի ծայրին ու հիացավ:

Նրան շատ հարմար եր ձեռքում բռնել այս նոր, հարմար և ծանր զենքը:

Այս յեղավ մարդկութան քարե կացինը... Միքանի որից այս կացինը շատ լավ պետք յեկավ Ուգ-Լոմին և Յուդենային:

Ձառհուրելի կռիվ.— Պոր գիշերը տիրում եր յերկրին: Ուգ-Լոմին քնած եր ժայռի դուրս ցցված մասում, իսկ Յուդենան նստած եր խարուչկի մոտ, ականջ դնելով գազանների զանազանակերպ ձայներին: Ներքևում գետը շարունակում եր իր անվերջ կարկաչանքը, և գիշերվա աներևույթ եյակներն անադմուկ վազվզում եին այս ու այն կողմ:

Ձմալելի լուսինը բարձրացավ յերկնակամարի վրա, և նրա դժգույն խորհրդավոր լույսը լուսավորեց, վերջապես, ապառաժի սպիտակ, սուր գագաթը: Գետի հովիտը դեռևս մնում եր կատարյալ խավարի մեջ և նուշիսկ յերևում եր ավելի մռայլապատ ու դաժան: Փոքր առ փոքր լուսնի լուսին սկսեցին աննկատելի կերպով խառնվել մոտեցող արշալուսի թեթև յերփերը: Յուդենայի աչքերը շարունակ դառնում եին նրա գլխի վերև բարձրացող ժայռի գագաթը:

Թեև նրա յուրաքանչյուր նայվածքի միջոցին ժայռի ուրվագիծը նկարվում եր յերկնքի ֆոնի վրա վորոշ և մեկին կերպով, սակայն նրան բաց

չեր թողնում մի տարտամ նախագգացում, թե մի ինչ-վոր վտանգ թագնված է անտեղ:

Սարուկի կարմիր բոցը հետզհետե մթնագունում էր և ծածկվում մոխրագույն շերտով: Ծխի ուղղահայաց սյունն ավելի և ավելի նկատելի չեր դառնում, և մինչև այդ ժամանակ աննկատելի մնացած իրերն սկսեցին ավելի և ավելի պարզ վորոշվել հովտի աղոտ լուսավորության մեջ: Աննկատելի կերպով նա սկսեց ննջել սովորականի նման պազած:

Հանկարծ նա վեր թռավ և ուղղվելով ուսականջները սրելով՝ հետազննող հայացք ձգեց ժայռի վրա վերևից մինչև ներքև:

Նա արձակեց հազիվ լսելի մի խուլ ձայն, և Ուգ-Լոմին, վորի քունը շատ թեթև էր, ինչպես կենդանիներինը, մի ակնթարթում արթնացավ: Նա վերցրեց իր կացինը և անձայն կանգնեց նրա մոտ:

Դեռ բավական մութն էր: Յերկրի վրա ձրգվում էին լուսնկա գիշերի սև ու մութ-մոխրագույն սավերներ, իսկ չերկնքի վրա դեռևս փայլում էր ուշացած վերջին աստղը: Ժայռի դուրս ցցված մասը, վորի վրա գտնվում էին նրանք, ներկայացնում էր խոտ բուսած մի փոքրիկ տարածություն, մոտ 6 ֆուտ լայնությամբ և 20 չերկարությամբ: Նրա դեպի հովիտ իջնող կողմ

վրա բուսել էին հասարակ ոգածաղիկներ (чернобыльник): Սրանց տակ փափուկ, սպիտակ ժայռ մոտ 50 ֆուտ սուր զառվալրով իջնում էր ներքև և վերջանում ընկուզենիների խիտ շարքերով, վորոնք չեղրափակում էին դեռ:

Ժայռն Ուգ-Լոմիից 40—50 ֆուտ բարձրությամբ վրա առաջ էր ցցվում ահագին կոշտեղով, վոր բնորոշ են կավային կազմություններին: Սոր, ուղղահայաց ձորը կտրում էր նրա մակերևութը: Նրա վրա բուսել էին փոքրիկ թփեր, և սրանց ոգնությունը Յուդենան և Ուգ-Լոմին կարողանում էին բարձրանալ և իջնել:

Այս չերկուսը թագ կացան, վորպես վախեցած չեղջերուների մի զույգ և հառած սպասում էին: Մի վայրկյան նրանք վռչինչ չեին լսում, բայց հետո բարձրից նրանց հասավ թափվող հողի մի թուլ ձայն և ճյուղերի ճալթյուն:

Ուգ-Լոմին վերցրեց կացինը և մոտեցավ ժայռի դուրս ցցված մասի ծայրին, վորովհետև նրա գլխի վերև կախված կավճային կոշտերը ծածկում էին ձորի վերին մասը: Նրա սիրտը հանկարծ ճմլվեց. — նա տեսավ բարայրի արջին, վոր իջնում էր գագաթից իրենց մոտ: Տեսավ արջին, բարայրերի և ժայռերի տեր ու տիրականին: Նրա չետեի տափակ տոտիկներն ուղիղ Ուգ-Լոմիի վերևն էին:

Արջը ճանկերով ափսոսաբան էր քարերից
և թփերից, վոր կարծես կասարելապես կպել
էր ժայռին: Բայց սրանով բոլորովին չէր պա-
կասել նրա ահռելիութունը: Լպրծուն չերախից
մինչև հաստարմատ պոչը նա կլինէր. առյուծից
մեկուկես անգամ մեծ և չերկու անգամ բարձր
մեծ մարդուց: Նա նայում էր Ուգ-Լոմին իր ու-
սի վրայից, նրա ահագին չերախը դուրս ցցված
լեզվով բացված էր. նա ծանր էր շնչում, ջա-
նալով հավասարության մեջ պահել իր ծանր
մարմինը...

Արջը հենման կետ գտնելով՝ կամացուկ փո-
քըր-ինչ ցածրացավ:

«Արջ» — բացականչեց Ուգ-Լոմին, նայելով
շուրջը չերկուղից սպիտակած չերեսով:

Յուդենան սոսկալի չերկուղն աչքերում
մատով ցուց ավեց դեպի ներքև:

Ուգ-Լոմին նայեց, և նրա բերանից թռչող
չերկուղի բացականչութունը սառեց նրա շրը-
թունքների վրա: Այնտեղ ներքևում, իր առաջին
թաթերով ժայռին հենված կանգնած էր մի ու-
րիշ, ահագին մոխրագույն մի մսի գունդ — սա-
եզ արջ էր: Թեև նա վորձ արջից փոքր էր, սա-
կայն և ափսոսաբան մի ահագին կենդանի չէր:

Ուգ-Լոմին սարսափի աղաղակով հավաքեց
ժայռի ցցված մասի վրա ցրված ձարխտից մի

բուռ և ձգեց հանգչող խարուչի մեջ: «Կրակ
չեղբայր», բղավեց նա, — «Կրակ չեղբայր»: Յու-
դենան նույնպես դուրս չեկավ իր անզգայացած
դրությունից և սկսեց ոգնել նրան: «Կրակ չեղ-
բայր, ոգնիր, ոգնիր, Կրակ չեղբայր»:

Սարուչի սիրտը դեռևս տաք էր, բայց կրա-
կը բոլորովին հանգել էր:

«Կրակ չեղբայր», — սարսափահար բղավում
էին նրանք: Բայց խարուչի հանգել էր, և նրանց
առջև այժմ միայն փռված էր մոխիրը: Ուգ-Լո-
մին կոխրահեց վոտերով և բուռնցքով խփեց մոխ-
րին: Յուդենան սկսեց կայծքարով կրակ ա-
նել: Նրանց աչքերը կարծես բեռված էին ձո-
րի այն շավղի վրա, վորով իջնում էր դադանը:

Արջի ահագին բրդոտ թաթերը չերևում էին
կավճային կոշտերի չեռուում: Նա դեռևս զգու-
շությամբ սողալով իջնում էր ապառաժի համա-
լյա ուղղահայաց լանջով: Նրա գլուխը չէր չե-
րևում, բայց նրանք պարզ լսում էին նրա խուլ
բարբաջանքը:

Յուդենան, վերջապես, կայծքարով կրակ
արեց: Ծառի ճյուղը վայրկենաբար վառվեց և
նորից հանգավ: Նա դեն ձգեց հուրհանն ու կայծ-
քարը և սարսափից անզգայացավ: Հետո, վոտի
կանգնելով, $1\frac{1}{2}$ — $2\frac{1}{2}$ արշին մագլցեց ժայռի
վրա. նա լինչպես կարող էր այստեղ գտնե մի-

բանի բոսկե կախված ֆալ, քանի վոր ժայռը բոլորովին ուղղահայաց եր, և նույնիսկ կապիկը չէր կարող մի վորեւե բանից բռնել ու կանգնել: 2-3 վայրկյանից նա արյունավիկ ձեռքերով չնաթռավ իր տեղը:

Ուղ-Լոմին կատաղած առաջ ու չնա եր գնում: Նա վազում եր, մեկ դեպի ժայռի ցցված մասի չեզըը, մեկ դեպի ձորը. նա չզիտեր, թե ինչ անե, նա չէր կարողանում մտածել:

Յուզեանն ժայռի քթին կպած ճշում եր ինչպես բռնված ճագար:

Այս ճշոցի միջոցին մի ինչ-վեր բան, խելագարի պես, ընկավ Ուղ-Լոմիի վրա: Սոսկալի վողբով նա վերցրեց իր կացինը և հարձակվեց արջի վրա: Հրեշը մոնչաց գարմացմամբ: Մի վայրկյանում Ուղ-Լոմին կախվեց թփից ուղղակի արջի վրա և թռավ նրա մեջքին, կիսով չափ թաղվեց նրա մորթու մեջ և մի ձեռով բռնեց գողանի կոկորդի թավոտ մազերից: Արջն այս անակնկալ հարձակումից այնպես հարվածահար չեղավ, վոր չզիմարելով շարունակեց կախված մնալ: Յեզ հանկարծ կացինը—մարդկային կացիններից առաջինը—կպավ նրա գանգին:

Արջի գլուխը բծեց, և նա սոսկալի մուրնչաց: Կացինը կտրեց մի գլուխ խորությամբ նրա կաշին ձախ աչքի կողմից, և առք արյունը կու-

րարցեց նրան այս կողմից: Նոր հարված ստանալով՝ արջը նորից մոնչաց և բարկացած ու զարմացած կրճաւցրեց առամենն ուղղակի Ուղ-Լոմիի չերեսի հանդեպ: Կացինը մի անգամ ևս բարձրանալով՝ իջավ նրա ծնոտին:

Հաջորդ հարվածը կուրացրեց նրա աջ աչքը և առաջացրեց նոր մոնչուեն, այս անգամ արդեն ցավից: Յուզեանն տեսավ, թե ինչպես արջի ծանրակշիւ, տափակ թաթերը սահեցին և սողացին ներքե, իսկ ինքն անշնորհք կերպով ցատկեց, կարծես ցանկանալով ընկնել ժայռից դուրս ցցված մասի վրա: Հետո բոլորն անհետացան, տարածվեց կոտորատվող կալնիները ճալթուներ, և ներքեից լսվեցին արջի ցավագին մոնչուենը՝ միախառնված մարդու աղաղակի հետ:

Յուզեանն լալով վազեց դեպի ժայռի ցցված մասի ծայրը և նայեց ներքե: Մի վայրկյան նրան թվաց, թե չերկու արջ և մի մարդ խառնըվել են մի կույտի մեջ: Ուղ-Լոմին պառկած եր վերևում: Հետո այդ մարդը վեր թռավ և սկսեց մագլցելով բարձրանալ ձորից, մինչդեռ արջերը միմյանց հետ կովում ելին կալնիները մեջ: Նրա կացինը մնացել եր ներքևում: Նրա կողքից չերեք տեղով արյուն եր հոսում: «Վե-րե», — գոչեց նա, և մի ակնթարթում Յուզեանն

սկսեց մազկցելով բարձրանալ նրա առջև ժայռի
դագաթը:

Կես վայրկյանից նրանք արդեն մազկցել ե-
լին ժայռի վրա: Նրանց սրտերը սաստիկ բաբա-
խում էին, բայց նրանք արդեն ապահով զրու-
թյան մեջ էին, վորովհետև յերկու արջն ել հե-
ռու ներքևումն էին: Արջը նստել եր յետին
վտաների վրա և, աշխատելով առաջի թաթերով,
արագ, հուսահատ շարժումներով արորում եր
արջունով լցված և կուրացած աչքերը: Ջարդված
եզ արջը կանգնած եր չորս թաթերի վրա փոքր
ինչ հեռու և դառնազին մոնչում եր: Ուզ-Հոմին
յերեսի վրա ընկել եր գետնին և յերեսը ձեռնե-
րի մեջ առած՝ պռկած եր արունաշաղախ,
դժվարությամբ շունչ քաշելով:

Յուզենան մի անգամ ել հայացք ձգեց ար-
ջերի վրա և հետո մոտենալով Ուզ-Հոմին՝ նստեց
նրա մոտ և նայում եր նրան ..

Հետո նա ամաչելով մեկնեց ձեռքը և հըպ-
վելով նրան՝ արձակեց մի կոկորդային ձայն, վոր
նշանակում եր նրա անունը: Նա դարձավ դեպի
Յուզենան և բարձրացավ՝ հենելով արմունկները
գետնին: Նրա յերեսը դժգուշն եր, ինչպես մա-
համերձ վախեցած մարդու: Մի վայրկյան հա-
ռած նայեց նա նրան և հանկարծ ծիծաղեց:
«Հոխ», — հաղթանակով բացականչեց նա:

«Հոխ», — բացականչեց Յուզենան:

Այս յեղավ նրանց պարզ, բայց և պերճ խո-
սակցությունը:

5. ՔԱՐԱՅՐԵՐՈՒՄ.

Տղերը, յերբևիցե տեսնել եք, արդյոք, մի վո-
րեւե անտառում կամ գետի ափին քարայր, հե-
տաքրքրական և նայել նրա մեջ, թե ինչ ե կա-
տարվում այնտեղ, բայց դարհուրելի չե մտնել
քարայրի մութ անցքով: Այս յերկուդը համարյա
միշտ վոհնչացնում ե հետաքրքրությունը:

Վոչ միայն յերբխաներդ, այլ և հասակա-
վորները յերկուդ են զգում, յերբ բավականաչափ
ներս են մտնում քարայրի մեջ՝ նույնիսկ որը
ցերեկով. թեև գիտեն, վոր այնտեղ վոչ մի վտան-
գավոր բան չկա, սակայն և այնպես՝ յերկուդ
են կրում: Վոչվոք չգիտե, թե ինչից ե առաջա-
նում այդ յերկուդը: Գուցե այդ մնացել ե մարդ-
կանց մեջ այն հին ժամանակներից, յերբ... բայց
ավելի լավ ե կարդանք հետևյալ պատմվածքը
մեր հեռավոր նախնիքների կյանքից. գուցե այդ
բացատրի մեզ, թե վորտեղից ե առաջանում այդ
անհասկանալի յերկուդը:

Սև ծուխը քուլա-քուլա արձրանում եր
քարայրի լայն, մութ անցքից: Գետափի այս ու-
այն կողմին թափված էլին բարերի անապին

կույտեր, բարձրում աճում եր դարավոր անտա-
ռը և հասնում մինչև ձորը: Տեղ-տեղ ձորից քաշ
եղին ընկել վորպես հանդուցավոր սև թուկեր
ծառերի բացվա՝ արմատները: Քարայրից փոքր
ինչ հեռու լնկած եղին միքանի ահազին ծառեր.
պարզ ե, վոր խորտակվել եղին փոթորկից:
Դրանք շատ եղին մոտեցել ձորի ափին. հողը
թափվել եր, արմատները թուլացել եղին, և կա-
տարի քամին առապալել եր այդ հսկաներին:

Ամբողջ տարածութունը մռայլ և ամալի
տեսք ունեւր. միայն քարայրի անցքից բարձրա-
ցող ծովից ցույց եր տալիս, վոր ալդտեղ մար-
դիկ են ապրում: Ահանրանք. ձորի գլխին կան-
դնած եղին չերկու մարդ, բարձրահասակ ու բա-
շակազմ, միմյանց շատ նման, չերկուսն ել սև
մորուք ու սև մազեր ունեւին, իսկ ուսերին ձրզ-
ված եղին դազանների մորթիներ, մեջքներին՝
կաշվե փոկ կապած:

Մինի ձեռին քարե կացին կար, իսկ մյուսի՝
բացի կացնից՝ աղեղ և միքանի նետ: Նրանք
դատարկ ձեռքով չեղին վերադառնում տուն.
մինը թռչուն եր բերել, մյուսը՝ չեղնիկ:

Վորսորդները իջան ձորը և, անցնելով քա-
ր սկույտերը, դնացին դեպի քարայրը: Քարայրից
մի 10 քաջ հեռու վորսորդներից մինը մի բար-
ձր ձայն արձակեց, վոր հաջողութուն եր ար-

տահայտում: Այս ձայնի վրա քարայրից դուրս
վազեցին չերեք չերեխաներ, իսկ սրանց չ'տից
չերեացին մի կին և մի ծերունի: Նրանք ել
նույնպես մորթի եղին հագած: Բոլորը վողջու-
նեցին վորսորդներին ուրախ աղաղակներով:
Յերեխաներն ուրախութունից ճչացին և քիչ
մնաց, վոր կովեղին միմյանց հետ, ցանկանալով
իրենք տանել սպանված թռչուն:

Վերջապես մտան քարայրը. աչնտեղ, անցքից
փոքր ինչ հեռու, վառվում եր ոջախը. մի ան-
կյունում փռված եղին միքանի մորթիներ, վոր
այդ մարդկանց ծառայում եղին վորպես անկո-
ղին:

Կիսն իսկույն գործի անցավ. նա քարե դա-
նակով քերթեց ու կարտեց չեղնիկը, և սկսեց
խորովել տաքացած քարերի և կրակի վրա: Ու-
րովուն շուտով պատրաստվեց, բայց խեղճերը
չկարողացան հանդիստ վաչելել. հանկարծ քարայ-
րի անցքի քարերը շխշխկացին, լավեց մռնչումն,
և քարայր մտավ մի ահեղի արջ: Նա չերախը
բացեց և գլուխը մեկ այս, մեկ այն կողմը դար-
ձրեց, կարծես ընտրելու, թե վմրին նախ լափի:
Այս բավական չեք՝ չերեացին ուրիշ չերկու գլուխ-
ներ ել՝ դաշակի և քոթոթի. անապատի չուրերը
ամբողջ ընտանիքով եղին շնորհ լնկել:

Մարդիկ այս հյուրերին տեսնելով՝ չերկուցից

սարսափեցին ու քարացած մնացին անշարժ կանգնած իրենց տեղում: Այս արջերը քարայրա-
լին ելին կոչվում, վորովհետև մարդկանց նման
քարայրերում ելին բնակվում: Մարդիկ բռնադբա-
վեցին քարայրերը և արջերի հետ շարունակ
կռիվ ելին մղում: Քարայրալիները այժմյաննե-
րից չեւին. նրանք շատ ավելի ուժեղ ելին ու
կատաղի:

Առաջինը արջին ավելի մոտ դանվող վոր-
սորդն ուշքի չեկավ. բարձր աղաղակով վոտքի
կանգնեց և կացինը ձեռն առավ. Բայց հենց
այդ բոպելին արջը թաթով խփեց նրան ու գե-
տին գլորեց. խեղճի գլուխը քարին խփվեց ու
մնաց անշարժ ընկած, կացինը վայր ընկավ նրա
ձեռից:

Արջն ուղում եր հարձակվել այն ծերունու
վրա, վոր ուղում եր ձեռը մեկնել կազնին: Բայց
այստեղ մյուս վորսորդը նրան փրկեց. նա ծանր
մահակը ամենայն ուժով հասցրեց արջի գլխին:
Ծանր հարվածից շշմած դադանը չեա քաշվեց,
բայց հետո կատաղի մոնչլունով նորից հարձակ-
վեց. արջին հետեւեց և դայակը իսկապես մարդ-
կանց բանը բուրդ կլինեք, յեթե նրանց չոգնելին
կացինները և մահակները: Ասենք մահակներով
այդպիսի թշնամիներին չի կարելի վախեցնել,
բայց ուր վոր ծանր մահակը անգոր եր գլու-

նրվում, այնտեղ վորբրիկ խանձողն եր բան
տեսնում:

Կինը ոջախից վերցրեց այրվող խանձողը և
զցեց դեպի արջը. խանձողը ուղղակի գլխին դի-
պավ. կայծերը ցրվեցին և թափվեցին արջի
բաց չերեսն ու աչքերը: Քարայրի արջը ան-
համեմատ ավելի ուժեղ եր, բայց չեր կարողա-
նում գիմադրել այդպիսի զենքին: Արջը տընկ-
տընկացրեց գլուխը, մոնչաց, բայց արդեն վոչ
թե կատաղութուն, այլ չերկցուղ եր հնչում նրա
մոնչլունի մեջ: Այս հարվածից դեռ ուշքի չեր
չեկել, չերբ չերկորդ խանձողը թռավ, ու դայակն
ել գուրկ շմաց հարվածներից. արջերը չեա
դարձան և խելակորույս փախան քարայրից:
Հաղթանակը մնաց մարդկանց. նրանք պաշտպա-
նեցին իրենց բնակարանը:

Իսկ ինչ չեղավ վիրավորված վորսորդը: Նա
շուտով ուշքի չեկավ. բարեբախտաբար վերքը
վտանգավոր չեր: Նրան փրկել եր գաղանների
մորթուց պատրաստված հանդերձը, վորը թուլաց-
րել եր արջի թաթի հարվածը: Ճիշտ ե, նրա
գլխի վրա առաջացել եր ուռուցք, բայց զանգը
անվտանգ եր մնացել: Յերկու-չերեք օրից նա
նորից վորսի չեր գնացել, կարծես վոչինչ չեր
պատահել:

Սակայն բնակարանի առթիվ մղած կռիվը

Իւարդկանց համար միշտ աջոյութեամբ չէր վերջանում. նրանցից շատ շատերը ընկել էին քաւրայրերի նախկին բնակիչներին—արջերի և աւլուծների թաթերի տակ:

Ջրուլցի յեմ Եարագրութեան համար:—Մարդիկ ինչպէս ճաղթեցին քաւրայրերի բնակիչներին—գիշակեր գազաններին:

6. ՀՅՈՒՂԵՐԻՑ ԲՆԱԿԱՐԱՆ.

Վայրենի գազանավորսը խղճուկ զենքը ձեռքին սար ու ձոր եր ընկել վորս վորոնելու: Սուր ելին նրա աչքերը, հաջողակ նրա ձեռքերը, հոգնածութուն չգիտելին նրա վտանները, բայց դադանն ել զգուշ եր և դյուրագոյաց, հեշտ չեմ նրան վորսալ: Վորսի յետևից ընկած գազանավորսը կամաց-կամաց բավական հեռացավ իր կայանից. ասենք նա չէր ել մտածում նորից վերադառնալու այնտեղ, նրա միտքն ամբողջովին զբաղված եր սպանելու մի վորևե գազան և հագեցնելու իր քաղցը: Գիշել ելու տեղի մասին նա միանգամայն չէր անհանգստանում: Յերեկոյան դեմ վայրենին բախտ ունեցավ սպանելու մի փոքրիկ գազան. վորսը մեծ չէր, սակայն ընթրիքին բավական եր: Վայրենին միքիչ ցախ հավաքեց, մի քանի կտոր չոր մամուռ գտավ և սկսեց կրակ անել. Գոռուց հանեց ձողն ու տախտակը փո-

սիկով և սկսեց պտտեցնել ձողը ինչպէս գալիկոն (բուրդով): Շուտով տախտակը ծխաց, վայրենին դրեց դրա մոտ չոր մամուռը և սկսեց փչել: Մի քանի բոպե՝ և կրակը պատրաստ եր: Վայրենին արդեն պատրաստվում եր խորովելու վորսը, չէրք մի բան խանգարեց նրան, անձրևն սկսեց կաթկաթել, վայրենին վերև նայեց, տեմով սև ամպերը կուտակվել են, հասկացավ, վոր չեղանակը վատանալու չէ, նա կարեց կանաչ ճյուղերը և խրեց խարուլիկ շարջը, աջնպէս, վոր վերեւ կամար ստացվեց: Այս խուղի մեջ, խարուլիկ կողքին անցկացրեց վայրենին ամբողջ գիշերը: Դրսում թափվում եր անձրևը, վորի կաթիլները մեկ-մեկ ընկնում էին խուղի մեջ, սակայն խարուլիկը չհանգավ, այս ամենալակուրդն եր վայրենու համար: Նա գիշակեր գազաններից ել յերկշուղ չունեւ. խարուլիկը նրան պաշտպանում եր, ինչպէս և տաքացնում: Առավոտյան անձրևը դադարեց, վայրենին թողեց խուղը և գնաց կրկին վորս վորոնելու:

7. ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՈՐԻՆԱԿՈՎ.

Արևը դեռ մայր չէր մտել, բայց արևոտում արդեն տիրում եր աղջամուղջ: Ահադին ծառերի գազաթները սաղարթներով միացել էին ու առա-

Ջացրել կանաչ կամար, վորի միջով լուսը հա-
զիվ եր թափանցում: Անտառը խուչ միապաղա-
ձայն եր հանում, կարծես թախծալից չերգ
չերգում և բացի այս միատեսակ ձայներից վ-
մի ուրիշ ձայն չեր լսվում անտառում:

Բայց ահա հեռվում լսվեց ցախերի ճրդճրդ
ցր և ծառերի մեջ չերկացին միքանի մարդ
Սրանք զգուշութամբ առաջ ելին գնում, ուշ-
գրութամբ ու չերկցուղով շուրջը նայելով: Այ-
մարդկանց միակ գենքը մահակն եր, միակ հա-
գերձը՝ մի ինչ-վոր բույսի լայն տերևները փ-
թաթած գոտու շուրջը:

Այս մարդիկ ուտելիք վորոնելով բավակա-
առաջացել ելին անտառի խորքը և շտապում ել-
լուսով դուրս գալ անտառից, վորպեսզի այնտե-
հզիչերելին, ուրեմն, նրանք մշտական բնակա-
րան ունեցին: Վոչ. նրանք բնակարան չունեցին
նրանց իբրև բնակարան ծառայում եր մացառ-
ուր նրանք գիշերում ելին: Մացառում գիշեր
այնպես սարսափելի չե, ինչպես մթին, խի-
անտառում, այնտեղ գոնե չերկինքը չերևում
ձիշտ ե, գիշատիչ գազանը հարձակվում ե նրան-
վրա և քնած ժամանակը, սակայն խիտ ճուղեր
չերբեմն նրանց պաշտպանում ելին գիշակե-
ներից:

Սրանք չորս հոգի ելին, գնում ելին խմբով

մինը գնում եր առաջից. չերկի դա առաջնորդն
եր, վոր մյուսներից ավելի լավ եր իմանում
ձանապարհը:

Հանկարծ առաջնորդը մի ճիշտ արձակեց ու-
կանգնեց. նրան թվաց, թե մի ինչ վո. կասկա-
ծելի խշխշոց ե լսում բոլորը զողացին և «չ-
բերը հառա՛ նայեցին շուրջը: Այսպես անցավ մի
րոպե, ամեն ինչ հանգստացավ, միայն բար-
ձրում ծառերի կատարներն ելին սուսափում:
Ձուր չեյին վրդովել. նրանք նորից առաջ անցան,
բայց հազիվ միքանի քալ ելին արել, չերը
հանկարծ շատ մոտից լսվեց մի ահեղ մռնչոց,
վորից կարծես ամբողջ անտառը գորրգաց:
Սրանից հետո անտառում լսվեց մի սոսկալի
ճիշ, ճիշ մահացու սարսափի և ցավի: Այդ՝
հետևից չեկող մարդու ճիշն եր: Նա գետնին
ընկած անուժ թալառում եր գիշակեր գազանի
ծանրութան տակ, վորը իր սուր ճիրաններ, խոր
խրել եր նրա մարմնի մեջ:

Մյուսները բոլոր ուժով սկսեցին փախչել:
Բայ՝ հեշտ չեր փախչել անտառով, այն ել աղ-
ջամղջին: Նրանք զիպչում ելին արմատներին,
վալը ելին ընկնում և ճյուղերը բերծում ելին
նրանց չերեսն ու մարմինը:

Յերկյուղից և հողնածուխունից չնշատառ-
սրանք շարունակում ելին փախչել, իսկ նրանց

հետևից լավում եր մեռնող ընկերոջ հեկեկանքը: Այս փախչողների սարսափը ավելի սաստկացավ, չեբբ լսեցին մի ուրիշ մոնչյուն իրենց առջևից: Պարզ եբ, վոր մի ուրիշ գիշատիչ ե գտնվում եր մի քիչ հեռու և իրենց հետևառել եր:

Առաջնորդը մի վայրկյան կանգ առավ, շուրջ նայեց, և մի վոսայունով թռավ մի ահագին ծառի մոտ, վորի ներքևի ճյուղերը կալելի չե: հեշտությամբ բռնել ձեռքով: Նա բռնեց ճյուղերը և արագությամբ բարձրացավ ծառը: Ընկերները հետևեցին նրա որինակին: Սրանք ավելի ավելի բարձրացան ծառը: Նրանց թվում եր թե գեռ գետնին շատ մոտիկ են և գազան կարող ե իրենց բռնել: Յեվ միայն այն ժամանակ փոքր ինչ հանգստացան, չեբբ հասան ծառի կատարին: Ամբողջ գիշերը նրանք անցկացրին ծառի վրա: Արդեն լուսացել եր, սակայն նրանք սիրտ չեյին անում իջնելու, և, չեբբ արեը բավական բարձրացավ, նրանք թողին իրենց ապաստանը:

Այնուհետև նրանք այլևս գետնին չեյին գիշերում. հենց վոր արեը մայր եր մանում, նրանք վորոնում եյին սաղարթախիտ ծառեր և գիշերում նրանց սաղարթների մեջ: Յերբեմն նրանք մինչև անգամ փոքրիկ խուղ եյին շինում ծառերի վրա՝ ձուղերով ու խոտով:

Այսպես զանազան տեղերում մարդիկ հետըհետե, մի տեղ վաղ, մի տեղ ավելի ուշ, սովորեցին թագ կենալ գիշատիչ գազաններից ծառերի վրա: Տղաներն ել սկսեցին մագլցել իրենց ծնողների չետից: Ծառը բնակարան դարձավ նախնական մարդկանց և չերկար ժամանակ ծառայում եր վորպես տուն:

Մարդկանց շատ սերունդներ մեծացել եյին չերկրից բարձր գտնվող խիտ սաղարթների մեջ: Հետագայում մարդիկ նույնիսկ դիմամբ շինում եյին բնակարաններ ձողերից ծառերի վրա: Սրանք ըստ սովորության գերադասում եյին տեղավորել իրենց բնակարանները չերկրից բարձր, թեպետ այլևս չերկյուղ չեյին կրում գազաններից: Ծառերի վրա թագնվելու սովորությունը սերնդից սերունդ անցել ե մարդկանց ժառանգաբար, Գուցե և հենց այս պատճառով մենք մանկության որերին սիրում ենք ծառ բարձրանալ և թագ կենալ նրա սաղարթների մեջ: Դեռ այժմ ել Հայաստանում, վոչ միայն գազաններից, այլ և մոծակներից պաշտպանվելու համար շինում են ծառերի կամ հատկապես գետնին լսվիված գերանների վրա սլառշգամբ և լայնտեղ գիշերում:

8 ԱՌԱՆՑ ԶԳԵՍՏԻ

Ավստրալիական Մելբուրն քաղաքի գլխավոր հրապարակում բարձրանում է մի բրոնզե գեղեցիկ արձան: Այս արձանը ներկայացնում է մի մյանց հարած չերք մարդ: Նրանց տեսքը ուժասպառ, նիհարած է, չերեսին նկատելի չե վիշտ և հուսահատություն, իսկ հանդերձը՝ ամբողջովին ցնցոտիք է:

Այս արձանը դրված է անգլիացի Բերկլի և Նըր չերկու ընկերները՝ Կենգի և Ուելսի հիշատակին: Սրանք առաջինը վորոշել են անցնել Ավստրալիայի կենտրոնը իմանալու, թե այնտեղ բնակվում են, արդյոք, մարդիկ, և կարելի՞ չէ այնտեղ բնակություն հաստատել: Սրանք ուղևորվեցին այնտեղ Մելբուրնից 1660 թվին, ոգոստոս ամսին: 15 հոգով: Վերցրին իրենց հետ բավական մեծ պաշար, ուղտեր, ձիեր: Բոլորը հավատացած էին, թե այս ճանապարհորդությունը հաջող կվերջանա, սակայն բախտը ծանր վիճակ եղավ: Կատրաստել Բերկլին ու Նրա ուղեկիցներին:

Այս խումբը համարյա մի տարուց հետո վերադարձավ, սակայն սրա հետ չէր ինքը Բերկլի Կենգի և Ուելսի հետ: Ծանապարհին Նրանք չեցին մնացել խմբից և անհետացել: Շատ շուտ տարածվեց քաղաքում այս տխուր լուրը: Շուտով

տով կազմվեցին հինգ հետախուզ խմբեր՝ նրանց վորոնելու:

Այս խմբերը չերկար ժամանակ թափառում էին այս անշրտի քարքարոտ անապատում, չպատահելով մարդկային բնակչություն: Միայն մի խումբ անսպասելի կերպով պատահեց քոչվոր վայրենիները՝ Ավստրալիայի բնիկներին. սրանց մեջ չոր գետնին նստած էր Կենգը: Դժվար էր Նրան ճանաչել, նա ավելի կաշիապատ կմախքի էր նման, քան մարդու. կեղտոտ ցնցոտիները քաշ էյին չեկած վրան, նա այնքան թույլ էր, վոր չէր կարողանում խոսել: Նրա շուրջը լուռ կանգնած էյին վայրենիները:

Ինչ տարորինակ, վորորմելի մարդիկ էյին դրանք. փոքր, սաստիկ լղար, բարակ վորտներով և ձեռքերով: Նրանք սեամորթ էյին, խիտ գանգուր մաղերով, դեղնագույն աչքերը անհանգիստ, վայրենի հայացք ունեյին: Սրանք ապրում են ուղղակի բաց չերկնքի տակ և վոչ մի զգեստ չեն կրում, Նրանք վայրի գազանների նման վազվզում են տեղից տեղ կերակուր վորոնելով: Բոլորն էլ բոբիկ են ման գալիս. չերբեմն նյանք ծառի կեղևից գոտի չեն կապում և կռնելին լայն ողակներ անցկացնում, սակայն դրանք ավելի շուտ զարդարանք են քան զգեստ: Միայն սրանցից շատ քչերը ամենացուրտ չեղանակին իրենց

ուսերին ձգում են սպանված գազանների մորթի
Վատ, շատ վատ են ապրում այս մերկ վայր
նրենքը:

Ճիշտ է, նրանց կլիման տաք է. ցերեկը շատ
և տոթ, սակայն պարզ, անամպ գիշերները ցուրտ
է լինում, Այսպիսի ժամանակ այս սևամորթների
ընդհանուր կրակ են անում և նրա շուրջը պառկում մեկ
գետնի վրա, դողում, կծկվում են ամբողջ գիշեր
ընթացքում, Վորոշ ժամանակ այստեղ փչում է ծով
լին ցուրտ քամի, վորը ստիպում է սրանց կոշիկ
գալ փշոտ թփերի մեջ, հավաքվել քարայրներում
ապաստանել ծառերի խոռոչներում:

Կենդանի շուտով լավացավ: Յերկու ու հետո նրանց
պատմեց, թե ինչպես նա յերկու ընկերներին
հետ յետ մնաց խմբից, ինչպես թափառեցին ան
ջրտի անապատում: Դրանք այդտեղ այնքան ներգրավ
վեցան հոգնածութլունից, քաղցից, տոթից, վրդանին կամ
Բեկրն ու Ուելսը չկարողացան տանել և մեռան ինչպես
կենդանի ցուցմունքով գանվեցան այդ դժբախտ
ճանապարհորդների զիակաները. նրանց փաթա
թեցին անգլիական դրոշակների մեջ և տեղն
տեղը թաղեցին, իսկ միքանի տարի հետո Մեծ
բուրի բնակիչները նրանց, այս յերեքին, գեղեցիկ
արձան կանգնեցրին:

Զուգացի յեկ Եսրազուրյան համար, — Ինչ
տվտարալիացիները հանդերձ չեն կրում, ալ
դոք, — կտոր չկար, թե ուրիշ պատճառով:


9. ԿԵՐԱԿՈՒՐ ՃԱՐԵԼԸ

Առաջին շենքը. — Ձեռքը կարճ է, բայց ձեռնա-
փայտ չեթե վերցնեն, ձեռքը կերակրի. թույլ
և փափուկ են մատները, բայց չեթե կենդանի-
ների կամ ձկան վոսկր, քար, մահակ վերցնեն,
կանդանան: Այսպես արավ նախնական մարդը,
և այսպիսով առաջ յեկան առաջին զենքերը:
Մրանք իսկապես մարդու ձեռքի և վոտքի, մատ-
ների և բուռնցքի շարունակութլունն էլին, սրանք
ավելացնում էին նրա ուժը:

Մարդն ստիպված էր ամեն ուր մտածել կե-
րակրի մասին, խուսափել գազաններից, կովել
նրանց հետ: Զանազան ժամանակներ յերեմն
այս մարդու գլխում նոր-նոր մտքեր էին ծա-
ղում: Մեկը մտածեց, թե ինչպես է հարմար գա-
լանին կամ թռչունին վորսալը, մի ուրիշը թե՛
ինչպես սուր քարերով մահակը մաքրել ճյու-
ղերից:

Հետզհետե զենքերը լավանում էին: Մահա-
կով կարելի չեր գազանին միայն շճեցնել, իսկ
չեթե նրա ծալրին սուր քար կամ վոսկր ամրաց-
նեին, դրանով ծակել և կտրել կարելի կլիներ:
Նայելով մահակի յերկարութլան կամ քարի մե-
ծութլան, նա նմանում էր կացնի: Միևնույն
իրերը միաժամանակ ծառայել են մարդկանց և,
երբեք գործիք, և՛ իրեր զենք:

Մարդիկ սովորեցին ձգել նիզակը և սպանել



Նկար 4 Նախնական մարդկանց գործիքներն ու զենքերը

գազանին փախչելիս: Բայց ձեռքով շատ հեռու

չէս կարող ձգել նիզակը, և գազանը շատ անգամ փախչում էր վորսորդից: Ընչպես պետք էր անել, վոր նիզակը հեռու թռչեր: Յեւ ահա մարդիկ հնարեցին աղեղը: Լարի համար նրանք մազանման խոտեր և կենդանիների շղեր ելին գործածում:

Նոր զենքը մարդու ձեռքն ավելի յերկար դարձրեց: Նետը նույն նիզակն է, միայն ավելի կարճ: Աղեղից արձակվելով հեռվից՝ սպանում էր գազանին կամ թռչունին: Կերակուրը ճարելը հեշտանում էր: Թույլ ծերունիները, կանաչք և յերեխաներն արմատներ և պտուղներ ելին վորոնում, ուժեղ տղամարդիկ վորսորդությամբ ելին պարապում: Գետ յեղած տեղերում մարդիկ ձրկնորսություն սովորեցին. նրանք ճյուղերից հյուսում ելին թարփեր, վոսկրից շինում կարթեր և դրանցով ձուկ բռնում:

Այդ հին ժամանակներում մարդիկ միայն մի հոգս ունեյին՝ վորքան կարելի չէ շատ ուտելիք ձարել: Յեւ ուտեստ վորոնելով՝ մարդիկ մեծ ճարպկություն ձեռք բերին, նկատեցին դադանների և թռչունների բարձր ու սովորությունները: Այս ոգնում էր նրանց վորսորդության միջոցին:

Գլխի ընկալ. — Գետի թեք, քարքարոտ փով բարձրանում էր վայրենի մարդը: Նա բո-

լորովին մերկ եր, և նրա ամբողջ կաշին սևացել
եր արեւից: Յերկար մազերը կախված ելին ու
սերին անկանոն վնջերով, և յերկար մորուքը
համարչա ծածկում եր կրծքի կեսը: Այդ մար-
դու ձեռքին մի բավական մեծ ձուկ կար. նա
այն վերցրել եր գետի ափից՝ սատկած: Ժամա-
նակ առ ժամանակ այդ մարդն ատաճեցրով կը-
րում եր ձուկը և գնալով ուտում, ճարպկու-
թյամբ բարձրանալով քարերի միջով վեր ու վեր՝
Վերջապես նա բարձրացավ ամենաբարձր տեղը
և սկսեց այնտեղից ներքև նայել:

Ջրառատ, լաշն գետի վրա ճուղողելով թըռչ-
կոտում ելին ձկնորս—թռչունները, ուշադրու-
թյամբ դիտելով իրենց վորսին: Յերբեմն այս
յերբեմն այն թռչունն իջնում եր ներքև և նորից
բարձրանում՝ կտցում բռնած մի թրթռացող ձուկ:
Մարդը յերկար նայեց այս ձկնորսությանը, հե-
տո կամացուկ յետ դարձավ և միջանի քայլ հե-
ռացավ ափից: Նա նայեց վեր. նրա գլխի վերև
յերկնքում, միջանի գիշակեր թռչուններ ելին
ճախրում:

Հանկարծ մի միտք ծագեց այդ մարդու գլ-
խում: Նա կանգնեց, նայեց իր ձեռքում քնա-
ցած ձկան և հետո՝ թռչուններին: Միքիչ մտա-
ծեց և ուղղվեց դեպի փոքր ինչ հեռու ընկած
լաշն, տափարակ քարը: Մարդը ձգվեց քարի վրա

յերեսը դեպի վեր, բարձրացրեց ձեռքը, ցցեց
ձուկը դեպի վեր և մեռած ձկացավ:

Թռչունները նկատեցին անշարժ պառկած
մարդուն և նրա ձեռքում բռնած ձուկը, բայց
չհարձակվեցին հրապուրիչ կերի վրա: Նրանք
յերկար ժամանակ շրջաններ կազմեցին մարդու
շուրջը՝ հետզհետե մոտենալով: Իսկ վերջինս համ-
բերությամբ սպասում եր և խփած արտահանու-
քի տակից հետևում թռչուններին: Վերջապես
թռչուններից մինը, վոր բոլորից ավելի քաջ եր
կամ ավելի քաղցած, վորոշեց ձկան համեղ պա-
տառը խելի: Նա արագությամբ իջավ ներքև և
ճանկերը ձկան մեջ մխեց: Այդ իսկ բույեյին
մարդը մյուս ձեռքով բռնեց նրա վորսը: Թռչունն
սկսեց թևահարել՝ աշխատելով դուրս պրծնել,
բայց արդեն ուշ եր: Մարդն առանց վորհե դժ-
վարության քաշեց նրա գլուխը:

Ահա այսպիսի միջոցներով ելին կերակըր-
վում նախնական մարդիկ: Գտնված սատկած
ձուկը, պատահմամբ բռնած թռչունը, բույսերի
արմատները և պտուղները նրանց կերակուրն
եյին կազմում: Մարդիկ գեներեր չունեցին: Նրանք
ստիպված ելին միջոցներ հնարել, վոր քաղցից
չմեռնեն, չնկնեն ուժեղ և գիշակեր գազանների
բերանը:

Ակամա վորսորդություն. — Ուր մարդը չեւ

եր ծառայում, և նրանք շատ բան սովորեցին
այդ դպրոցում:

Զրուցի յեվ Շարագրութեան համար.— Ձեր տեղի
բնակիչները գլխավոր պարապմունքն ի՞նչ է։ Ձեր տե-
ղում կան վորսորդութեամբ պարապող մարդիկ։ Ի՞նչ
պազաններ և թռչուններ են վորսում։ Միայն վորսոր-
դութեանով են ապրում։ Գուշակեցեք և պատմեցեք,
թե ի՞նչ խորամանկութուն են անում ջալամ վորսոր-
դները։

10. քԱՐԻ ԴԱՐ

Մենք այժմ գրում ենք պողպատե գրիչներով, իսկ 50 տարի առաջ գրում էին սագի փետուրներով: Մեզ անսովոր կթվա գրել սագի փետուրով և մենք այժմ հետաքրքրվածքով ենք նայում այն պատկերին, Վոր ներկայացնում է հին զրազրին՝ ձեռքում փետուրե գրիչ: Անսովոր եւ բացահայտ:

Անսովոր եւ, Բայց մենք, աշնուամենայնիվ,
հեշտութեամբ կարող ենք մեզ պատկերացնել,
թէ ինչպէս մեր պապերն ու տատերը կարողա-
ցել են առանց պողպատե գրիչներէ յել յոլա
գնալ այն դեպքում, յետե գրել գիտելին և գրում
եղին: Ավելի դժվար է մեզ մտքով փոխադրել
այն հեռավոր ժամանակները, յերբ մարդիկ բո-
ւորովին չգիտեցին շինել լիւս մի պողպատե, յեր-
կաթե, չուգունե և ընդհանրապէս մետաղե իր:

Դժվար ե մեզ համար յերևակայել, թե ինչպես
մարդիկ այդ ժամանակներում ապրում էին ա-
ռանց պողպատե ասեղի, մանգաղի և գերանդու,
առանց յերկաթե մեխերի, առանց չուգունի, ա-
ռանց ժեշտի և պղնձի, մի խոսքով՝ առանց վորեւ
մետաղե գործիքի։ Մինչդեռ մարդիկ յերկար ժա-
մանակ չէին իմանում նրանց պատրաստել։

Այս ժամանակը տեւել է վոչ մի հարյուրյակ
և վոչ ել մի հազար տարի: Նա տեւել է բոլոր-
վոր տարիներ, գուցե և հարյուր հազար տարի-
ներից ավելի: Յեւ ասպէս յերկարատե ժամա-
նակամիջոցի ընթացքում մարդիկ չեղին իմացել
մետադներեցի գործիքներ շինելու արհեստը, Նրանք
շատացել են բարի, փայտի և վոսկրի գործիք-
ներով:

Այս յերեք նյութերից ամենից գիմացկունը քարն է. նրանից շինված գործիքները գետնի մեջ մնացել են մինչև մեր օրերը, վոսկրե գործիքներն ավելի քիչ են գտնվում, իսկ փայտից շինվածն՝ ըր փտել են ամբողջովին: Քարայրերի և դամբանների պեղումները միջոցին գիտնականները գտնում են անեղծ մնացած քարե գործիքներ, և դրանցով էլ այն ամբողջ ժամանակամիջոցը, յերբ մարդիկ չեյին իմանում մետաղներ գործադրել, կոչվում է քարի դար:

Մի քանի հին դամբաններում գիտնական.

ները գտնում են այնպիսի քարի գործիքներ, վոր շինված են արվեստորեն և նուրբ։ Ուրիշ դամբաններում, լնդհակառակը, գտնվում են քարի գործիքներ շատ կոպիտ, համարյա առանց վորևե մշակման։ Թե առաջինները և թե սրանք մնացել են մեզ քարի դարից, միայն մի քանի գործիքներ շինել են քարի դարի վերջում, մյուսները՝ սկզբում։

Ամենահին գործիքը - ծանր, կսպիտ, խփելու քարն է, վոր մարդը վերցրել է գետնից և մի ուրիշ քարի խփելով, փոքր ինչ տաշել։ այսպես տաշելով՝ նախնական մարդը փոքր ինչ սրացրել է իր առաջին գործիքը։ սրանով էլ վերջացել է նախնական գործիքների ամբողջ պատրաստությունը։

Ժամանակի ընթացքում մարդը հարմարություններ ձեռք բերեց ավելի սրացնելու քարերը։ Նա սովորեց տարբերել քարերի տեսակները, ընտրել նրանցից միայն այնպիսիները, վորոնք ամենից ավելի կարծր են և ավելի հարմար խփելով տաշվելու (առավելապես կայծաքարը)։ Նա ձեռք բերեց, բացի խփող քարից, նաև դանակներ և քերիչներ, սաստիկ սրած կողերով, դրանցով նա կտրում էր միս, քերում և մաքրում էր սպանած գաղանների մորթիները, կտրատում էր կաշին և այլն։ Սրանք են նախնական բանվորական գործիքները։

Խաղմաթիվ փորձերով և լարված ջանքերով մարդիկ կատարելագործում ելին իրենց կովի գենքերը և աշխատանքի գործիքները։ Նշանավոր առաջադիմություն էր այն, վոր մարդիկ սովորեցին կապել իրենց շարե գործիքներին փայտե ձող կաշու չերիղներով կամ բույսերի մազիգուկներով, իսկ ավելի ուշ՝ նրանք ձեռք բերին ավելի նշանավոր կատարելագործություն, նրանք սովորեցին քսելով կամ վոլորելով ծակ բանալ քարի մեջ, կոխում ելին այդ ծակի մեջ փայտե ձող և այսպիսով շինում մուրճ կամ կացին՝ հարմար կոթով։ Այս գործիքով մարդը կարողանում էր իր թշնամուն ավելի ուժեղ և աջողակ հարված հասցնել։

Մարդիկ գործիքներ պատրաստելով սովորեցին հարմարեցնել նրանց գանազան նպատակներին և կարիքներին։ Հազարավոր տարիներ ընթացքում հնարվել են շատ տեսակի գործիքներ -- սուր դանակներ, կացին, ատամնավոր դանակ -- սղոցներ, մուրճեր, փայտատաներ, սլաքներ, գայլիկոններ, -- և այս բոլորը շատ արվեստորեն շինվում ելին քարից։

Գործիքները շինվում ելին վոչ միայն բազմազան, այլ և գեղեցիկ, նրանց մակերևույթը մեծ ջանքով հղկում, վողորկում ելին։ Մարդիկ ձեռք տում ելին և հարմարության, և գեղեցկության։

Կոպիտ, չմշակված գործիքներից մարդիկ շատ համը քայլերով անցան դեպի հետագա լավ պատրաստվածները: Մեր աչքին չերևացող ամեն մի փոքր կատարելագործութուն միանգամից չե ձեռք բերված, այլ սրված է մարդկային սերունդներին հարյուրավոր տարիների ընթացքում: Հետագայում քարե գործիքների պատրաստութունը այնքան ծանր գործ էր դարձել, վոր ամեն մարդ չէր կարող ձեռնարկել: Կոպիտ, անմշակ գործիքներն այլևս վոչվոքի հարկավոր չէին: Յերևացին վարպետ կայծաքար աաշողներ, վորոնք զբաղվում էին մասնագիտորեն գործիքներ շինելով՝ հիմնվեցին արհեստանոցներ՝ նրանց պատրաստության համար:

Քարի ամբողջ չերկարատե դարը բաժանվում է չերկու մեծ շրջանի. պալեոլիսիկ, տաշած քարերի կամ քարի հին շրջան, և նեոլիսիկ, հղկած քարի կամ քարի նոր շրջան: Նեոլիտիկ շրջանում մարդիկ գո ծ էին ածում արդեն հրդկած քարե գործիքներ:

Քարի դարում մարդիկ բացի քարից ուրիշ նյութերից ել եչին պատրաստում գործիքներ. ալյուպե, փայտից, կենդանիների վոսկրներից և չեղջուրների: Մարդը ծանր, կոպիտ մահակից, վոր զրկված է վորևե շենքից-շնորհքից, հետդհետե հառավ մինչև մետաղե նուրբ գործիքները,

մինչև նեոլիտ ու աղեղը, վոր շանթում է թշնամուն հեռու տարածութունից: Նույնպես սահած հազարավոր տարիներից հետո մարդիկ սովորեցին արվեստական մշակման չենթարկել վոսկրն ու չեղջուրը: Նրանք սկսեցին դրանցից շինել ատամնավոր հարպուններ, ասեղներ, բզեք, դրեր, սլաքներ, ինչպես և զարգեք, որինակ՝ մանյակներ:

Սակայն, չնայելով վոր քարի, վոսկրի և փայտի մշակումը գնալով կատարելագործվում էր, աչնուամենայնիվ նա տեղի տվեց մետաղի դարին: Մկզբում մարդիկ սովորեցին գործիքներ պատրաստել պղնձից և բւոնդից (պղնձի և անագի խառնուրդից—անագապղնձից), հետո չերկաթից: Այժմ ել ամենալավ, դիմաչկուն և սուգործիքները պողպատից և չերկաթից են:

Քարի դարը փոխվեց բրոնզի և չերկաթի դարերի:

11. ԻՆՉՊԵՍ ՏԵՂԵԿԱՑԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԵՆՑԱՂԻ ՄԱՍԻՆ

Ձգրված գիրք. — Մի անգամ մի տղա իր հորից իմացավ, վոր գործարանում վառարանները վառում են վոչ թե փայտով, այլ քարածուխով:

— Ի՞նչ բան է այդ քարածուխը, — հարցրեց նա.

— Զեմ կարող քեզ բացատրել, — պատանւ-
խանեց հայրը: Գիտեմ միայն, վոր այն հանում
են գետնից: Տեսքով նա սև եւ կարծր, ինչպես
քարը: Այս պատճառով եւ նրան կոչում են քա-
րածուխ:

Տղայի հետաքրքրութունը շալ ժվեց. նա սաս-
տիկ ցանկացավ իմանալ, թե ինչպես են գետ-
նից վառելիք հանում: Տղան արդեն յերրորդ
տարին եր, վոր գնում եր ուսումնարան. նա
վորոշեց ուսուցչին հարցնել քարածուխի մա-
սին: Հետևյալ որը դասերից հետո նա մոտեցավ
ուսուցչին եւ ասաց.

— Վարժապետ, խնդրեմ բացատրեք ինձ,
թե ինչ ե քարածուխը: Հայրս ասաց, թե այս
ածուխը դանվում ե գետնի խորքում, նրան վո-
րելով հանում են ե նրանով վառարանները վա-
ռում, փայտի փոխարեն: Ինչպես ընկավ ածու-
խը գետնի մեջ, այն ել այնքան խոր:

— Այդ յերկու խոսքով չի կարելի բացա-
տրել, պատասխանեց ուսուցիչը: — Այ, չես բեզ
մի գրքույկ կտամ. նա կպատմի քեզ. թե ինչ-
պես ե առաջացել քարածուխը, ե ինչպես են
նրան հանում: Միայն ուշադրութեամբ կարդա:

Յեւ ուսուցիչը տվեց տղային մի փոքրիկ
գրքույկ՝ պատկերներով: Յերեսն տանը կար-
դաց գրքույկը: Հիւրավի, գրքույկը մանրամասն

պատմեց նրան քարածուխի մասին: Ինչ վար
պարզ չեր գրված — պարզեցին պատկերները:
Գրքույկից տղան տեղեկացավ, թե ինչ եր կա-
տարվում յերկրիս վրա հազարավոր տարիներ
առաջ, ինչպես ե ինչից ե կազմվում քարածուխը:

Միայն քարածուխի մասին չե, վոր կարելի
չե իմանալ գրքերից: Կան գրքույկներ, վորոնց
մեջ գրված են, թե ինչպես ելին ապրում մար-
դիկ հնագույն ժամանակներում, ինչով ելին սըն-
վում, ինչ ելին հագնում: Այս գրքույկները գրել
են գիտնական մարդիկ: Բայց վորպեսզի գրելին
այդ, նրանք պետք ե նախապես կարդալին մի
ուրիշ, մեծ գիրք: Այս մեծ գիրքը — Յերկիրն ե
յեւ բոլորը, ինչ վոր նրա վրա յեւ մեջը կա:
Շատ բան կարելի չե իմանալ այս գրքից: Մի-
շատ բան ե գիտենալ կարդալ նրան: Այժմ մենք
կպատմենք, թե ինչպես գիտնական մարդիկ կար-
դում են այս մեծ գիրքը:

Ինչպես են կարդում չգրված գիրքը. — Մի
անգամ, մոտ 60 տարի առաջ, Դորդոն գետի
հովտում (Փրանսիայում) վեց մարդ յերևացին:
Մրանցից յերկուսը, ըստ յերևույթին, քաղաքացի
գիտնականներ ելին, առանց բեռի, իսկ մնացած
չորսը՝ բանվորներ՝ յերկաթե բահերով, լոմերով
ե թիերով բռնավորված: Հովտի ժայռոտ լան-
ջին տեղ տեղ սև բացվածքներ ելին յերևում:

Սրանք սկսեցին բարձրանալ դեպի զրանցից մինը: Շուտով հասան բացվածքին: Սա մի անցք էր դեպի քարայրը:

Գիտնականները վառեցին լապտերները և զգուշությամբ մտան մութ քարայրը: Նրանց հետևեցին բանվորները: Խոնավ և խեղդուկ ոդն սկսեց ճնշել յեկվորներին, բայց նրանք ուշադրություն չդարձրին:

Գիտնականները գնում էին առաջից և լուսավորում էին ճանապարհը: Մոտ տասը քայլից նրանք կանգ առան և սկսեցին ուշադրությամբ զննել քարայրի հատակն ու առաստաղը:

— Զփորձենք պեղել այստեղ, — ասաց նրանցից մեկը:

— Փորձենք, — պատասխանեց մյուսը:

Բանվորներն սկսեցին փորել գետինը: Աշխատանքը կատարվում էր շատ կամաց, վո, ովհետև պատահում էին քարեր և վոսկրների կտորներ: Յերկու գիտնականները հետևում էին փորելուն և զննում դուրս չեկած ամեն մի բարը կամ վոսկրը:

— Ի՜նչ է, գանձ են փորոնում այս մարդիկ:

— Թեևս, միայն մի առանձին տեսակի դանձ:

Լարտե և Կրիստի կոչված այս գիտնականները քարայրում փորոնում էին վայրենի մարդ-

կանց հին բնակության տեղեր: Յեվրոպայում արդեն անհիշատակ ժամանակներից չկան վայրենիներ: Սակայն, մի ժամանակ նրանք ապրել են այստեղ, և պետք է վոր հետքեր մնացած լինեն:

Մի քանի չերկրներում վայրենիները հիմա չեկ ապրում են քարայրներում: Այս պատճառով էլ գիտնականներն սկսեցին պեղել քարայրները Յեվրոպայումս էլ, չենթադրելով, վոր ավելի շուտ ապրիտի տեղերում կարող են գտնվել չեվրոպական վայրենիների թողած հետքերը: Այսպիսի գիտնականներից էին նաև Լարտեն և Կրիստին:

Բանվորներն արդեն փորել էին մի քանի շերտ, սակայն Լարտեյի և Կրիստիի համար մի առանձին նշանակութուն ունեցող բան չէր գտնվել: Վերջապես մոտ 2 արշին խորության մեջ սկսեցին յերևալ հետաքրքիր քարեր և վոսկրներ:

— Նայեցեք, ահա կալժաքարի կացին, — ասաց Լարտեն իր ընկերոջը: Ահա և նիզակի ծայր և դանակ: Զիշտ աշպրիտի գնեքեր ունեն Ալստրալիայի և Աֆրիկայի վայրենիները: Նրանք շատ չեն բարձրացել այս քարայրի վայրենի բնակիչներից:

Բացի կացնից, դանակից և խուրից հանեցին մի քանի վոսկրի կտոր, դանազան կենդա-

նիրնեի ծակված վոսկրներ, նախշերով պատած, վոսկրե ասեղ և կարթ՝ նուշնպես վոսկրներից, Գիտնականներն առաջժմ դադարեցրին իրենց պեղումը: Նրանք հրամայեցին բանվորներին հավաքել գտնված իրերը և քարայրից դուրս հանել: Հեռավոր դարերի վկաները.—Արևի լուսով ուս'ցին գննել գտնված իրերը և հողից մաքրել: Բանվորները հետաքրքրությունը նայում էին քաւերին և վոսկրներին: Նրանցից մեկը ձեռքն առավ մի յերկար վոսկր, նրա մի ծայրը սրած էր, իսկ մյուսում մի կլոր ծակ էր բացված: Բանվորն այս ու այն կողմ դարձրեց վոսկրը և ծիծաղ'լով ասաց.

— Ահա քեզ գործիք:

— Այո, շատ նշանավոր գործիք,—ասաց Կրիստին:— Դուք կարի մեքենա տեսել եք:

— Ինչպես չե՞. իմ տանս ել կա կարի մեքենա.—պատասխանեց բանվորը:

— Ահա թե ինչից ե առաջացել կարի մեքենան,—ասաց Կրիստին և ցույց տվեց բանվորի բռնած վոսկրը:

Վերջինս տարակուսանքով նայեց գիտնականին:

— Այս վոսկրը,—շարունակեց Կրիստին,— վայրենի մարդու ասեղն է. Սկզբում մարդիկ փոշ մի ասեղ չեն ունեցել: Այցել են հազարա-

վոր տարիներ, և նրանք հնարել են վոսկրե ասեղներ, ինչպես այս ե: Հետո, շատ, շատ տարիներ անց, մարդիկ սկսել են ասեղներ շինել բրոնզից, հետո յերկաթից: Յերկաթե ասեղով կարելը շատ ավելի հեշտ է, քան վոսկրով: Վերջապես մոտ ժամանակներս հնարել են կարի մեքենան, վոր ինքն իրեն կարում է, բավական է վոր դարձնեն անիվը:

— Այ թե ինչ,—մտախոհ առաց բանվորը.— ասել ե՞ այս վոսկրը նախամայր է գալիս իմ կարի մեքենային:

Կրիստին ծիծաղեց և ասաց.

— Թերեւս. իսկ այս քարերը,—նա մտանշեց յերկու քար,—ձեր ղանակների և կացինների նախահայրերն են: Վայրենիները չէին կարողանում յերկաթ մշակել, սրա համար ել սովորեցին քարից ու վոսկրից գործիքներ շինել: Մարդիկ անհետացան, սակայն նրանց գործիքները մնացին: Այս մնացորդներով մենք կարող ենք մակաբերել, թե ինչպես են ապրել մեր հեռավոր նախնիները:

— Այս վաղո՞ց ե յեղել,—հարցրեց բանվորը:

— Շատ վաղուց, մեզանից մի քանի հազար տարի առաջ: Բայց միջքանի յերկրներում—Աֆրիկայում, Ավստրալիայում—հիմա չեւ ապ-

րում են կիսավայրենի ժողովուրդներ. նրանք ել
այնպիսի գործիքներ ունեն, ինչպիսին մենք
այսօր գտանք քարայրում: Վայրենիները չերկիր
չեն վարում, այլ ապրում են միայն վորսալով
գազաններ և թռչուններ: Այսպես ել հնումն ապ-
րել են մարդիկ և՛ մեր Ֆրանսիայում:

Կրիստին և Լարտեն գարսեցին քարերն ու
վոսկրները պալուսակի մեջ, վճարեցին բանվոր-
ներին և վերադարձան քաղաք, իսկ բանվորները
շարունակում էին ելի խոսել այն տարրինակ
գանձի մասին, վոր իրենք պեղել էին քարայրում:

Լարտեն և Կրիստին տասը տարի շարունակ
գալիս էին Դոդոն գետի հովիտը: Նրանք պե-
ղումներ էին կատարում քարայրում և գտան
ելի շատ գործիքներ, վոր մնացել էին վայրե-
սիներից:

Վոչ միայն Ֆրանսիայում, այլ և Գերմանիա-
յում, Ռուսաստանում, Հայաստանում կատարվել
են պեղումներ և գտնվել գործիքներ, վորոնք
միանգամայն նման են այդ պեղված իրերին:

Այսպես 1914 թվին Յերվանդ Լալայանը
պեղել և Նշմիաձնի մոտ գտնված Շրեշ բլուրը
և այդտեղ գտել և քարի դարի գործիքներ, վո-
րոնց հնութունը հասնում է 6000 տարվա: Այդ
գործիքներն ել, վոր շինված են հրդիված քարից
և վոսկրներից, միանգամայն նման են Յեվրո-
պայում գտնվածներին:

Պեղումներ Վիջոցին գտնված հնություն-
ները պահվում են առանձին. հիմարկություն-
ների մեջ, վոր կոչվում են պատմական կամ
հնագիտական թանգարան:

Զուլցի լեվ ռադգրուքյան համար.— Ձեր կող-
մերում քարայրեր կան: Յերբիցե պեղումներ կատար-
վել են այդ տեղերում: Զուլցությամբ և ուշադրությամբ
զննեցեք քարայրերը, վոպեսզի տեսնեք, թե չի մնա-
ցել նրանց մեջ վորևէ հնություն: Ձեր կողմերում դամ-
բաններ կան: Ձեք լսել, թե նրանց մեջ ինչ են գտել:
Հարցրեք: Յեղել ևք վորևէ հնագիտական թանգարա-
նում: Նկարագրեցեք:

12. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՇՆԱՄԻ—ԸՆԴՀԱՆՈՒՐ Վ ՈՐ Ս

Ահա անտառի գետակի թեք լեզերքը: Այս
ափի մի կողմը տարածվում է մի ընդարձակ
հրապարակ, և սրա վրա նկատելի չեն մեծ սըմ-
բալիների հետքեր: Այս հետքերից չերևում է, վոր
մեծ-մեծ գազաններ են գալիս այստեղ շուր խմե-
լու: Զուր խմելու տեղից մի շավիղ ձգվում է և
կորչում մոտակա անտառում:

Կեսօր եր: Միայն թռչունների ճովողունը
խանգարում եր խաղաղությունը: Բայց ահա ան-
տառի կողմից լավեյ մի ճալթյուն, կարծես մինը
ցախ եր կտրատում: Ճալթյունը լսվում է ավելի

և ավելի մոտիկից: Շուտով անտառից դուրս ե
ցցվում մի հրեշալին գլուխ՝ կնճիթով և ժանիք-
ներով: հետո լերեւում ե ամենամեծ գազանի ամ-
բողջ մարմինը: Մամոնտ եր սա:

Գազանը կասկածանքով նայում ե շուրջը,
լերկու-լերեք քալ անում և հանկարծ անհետա-
նում: Հենց այս բոլորին հնչում ե մի սոսկալի
մռնչյուն: Այն հորից, վորի մեջ ընկել եր մա-
մոնտը, դուրս ե ցցվում կնճիթը և սկսում կա-
տաղի կերպով ճոճվել ողում: Մամոնտի մռնչյու-
նի վրա անտառից դուրս են պրծնում հիսունի
չաի համարյա մերկ մարդիկ—աղամարդիկ, յե-
րեխաներ, վորենցից ամեն մեկի ձեռին վորեւե
ղենք կար. մեկի ձեռին ձող՝ քարե ծայրով, ա-
ղեղ, քարի կացին, մի ուրիշի՝ հաղիվ կրելի քար:

Մարդիկ վայրենի գոռգոռոցով ու ալմուկով
շրջապատեցին հորը: Մամոնտի վրա սկսեցին
նիզակներ, նետեր, քարեր տեղալ: Կույր գազա-
նը հորում գժվարությամբ շուռումուռ եր գա-
լիս, մռնչում եր, կնճիթը ցնցում, բայց չեր կա-
րողանում հորից դուրս գալ, իսկ նետերն ու
քարերը շարունակում ելին տեղալ հորի մեջ:

Կռիվը հարբեցրել եր մարդկանց: Ավելի
համարձակները սաստիկ մոտենում ելին հորի
լեզրին, վոր ավելի հաջող կերպով հարվածելին:
Հանկաժ մամոնտը մեկնեց կնճիթը, բռնեց մի

անդգուշ խիղախի մեջքից, վել և բարձրացրեց և
խփեց գետնին: Խշվառը չկարողացավ նուշխիսկ
ճիչ արձակել: Բարձրաձայն վողբով պատասխա-
նեց ամբոխն ընկերոջ կորստին և ավելի կատա-
ղությամբ սկսեց խփել մամոնտին: Սրանց քար
չեր պակասում, վորովհետև նախորոք հոգաւել
ելին: Վերջապես մամոնտի մռնչյունն սկսեց թու-
լանալ և բոլորովին դադարեց: Վիթխարի կնճիթը
թուլացած վայր ընկավ:

Մարդիկ նկատեցին այս և կանգ առան: Հետո
զգուշությամբ մոտեցան հորին, վոր արդեն կի-
սով չափ լցվել եր քարերով: Սկսեցին քարերով
զրգոել գազանին. տեսան՝ չի շարժվում և վոչ
ել շունչ քաշում: Ուրախացան վայրենիները:
Ընկերոջ կորուստը մոռացության տրվեց: Հորի
շուրջը վայրենի և աղմկալի պար սկսեցին: Մար-
դիկ տոնում ելին իրենց հաղթությունը զորեղ
թշնամու դեմ: Յերբ ուրախությունն անցավ,
սկսեցին վոլսը բաժանել:

13. ԳԱԶԱՆԻ ՇԵՏՔՈՎ

Հազարավոր տարիներ առաջ Յեկրոպան
ծածկված եր անանցանելի անտառներով: Կաղ-
նիներ սոճիներ, թխկիներ անընդհատ սոսափում
ելին իրենց սաղարթներով: Անտառում թափա-

ռուս՝ ելին վայրի զազաններ. այստեղ կային առ-
յուծներ, վագրեր, ռնդեղջյուրներ, գայլեր. սրանք
վորսում ելին ալծյափներ, չեղջերուներ, վայրի
ձիեր: Ծառերի սաղարթներում ապաստանում
եյին զանազան տեսակի բազմաթիվ թռչուններ:

Այս անծայր անտառում, Կարպատյան լեռնաշղթայի լեռներից մեկի մոտ, գետափին, մի քարայր կար։ Ձմեռ, գարուն այս քարայրի բերանը նայում եր գետին, վորպես մի վիթխարի գազանի սև չերախ, վորից անընդհատ հագիւմ նկատելի ծուխ եր բարձրանում։

Աշուն եր, և անս թե ինչ պատահեց տն-
տեղ, այս հեռավոր ժամանակում: Քարալորի մեջ-
աեղում վառվում եր մի փոքրիկ խարույկ: Նրա
շուրջը նստած ելին մի քանի մեծ և փոքր եղակ-
ներ: Սրանք վայրենի մարդիկ ելին: Նրանք նոր
ելին այդ քաղաքը գազաններից խլել և այդտեղ
ելին ապաստանում վառ չեղանակներին: Մարդ-
կանց մեջքերը ծածկված ելին կենդանիները մոր-
թիներով. մերկ կրծքերն ու վոտները տաքացնում
ելին խարույկի վրա: Կոշտացած, մազոտ դեմ-
քերը, քաղցած աչքերը, գլխի չերկար և խիտ մա-
դերը հիշեցնում ելին ավելի շուտ գազանների,
քան թե մարդկանց: Քարալորում տիրող ծխի
պատճառով մութն եր: Նրա հեռավոր անկյուն-
ներում չերբեմնապես լսվում ելին կրծփող վոս-

կրների կրճկրճոցը և պրճպրճոցը: Բոլորն ել
քաղցած ելին, բոլորն ել ուզում ելին ուտել և
սպասում ելին իրենց ամուսիններին և հայրե-
րին, վորոնք գնացել ելին վորսի: Քարայրում
կալին միայն հիվանդներ և յերեխաներ և մի
քանի չափահաս մարդիկ՝ պաշտպանության հա-
մար: Քարայրի պատերը մերկ ելին և խոնավ:
Տեղ-տեղ թափված ելին կրծած վոսկրներ և
կենդանիների մորթիներ:

Հանկարծ մուտքի մոտ խշխշոց և ձայներ-
լսվեցին: Քարալը ու մարդիկ ականջները կա-
խեցին և հետո ուրախ-ուրախ ծվվացին ու լեզ-
վով սուլեցին: Նրանք այդ ձայներից իմացան,
վոր յեկողներն իրենց մարդիկն էին: Փոքրիկ-
ները դեմ վազեցին յեկողներին: Սրանք մեկ-մեկ
ներս մտան, բարկացած չեա մղեցին իրենց կաշող
յերեխաներին և քաղցած, փայլուն աչքերով
նստեցին ոշախի շուրջը:

Նրանք ձեռնուռնայն ելին վերադարձել: Արդեն մի քանի ուր եր, վոր առանց սննդի ելին մնացել և այդ ուրն ել դարձյալ չեր հաջողվել վորևե բան ձեռք գցել: Գաղանները, կենդանիներն սկսել ելին հեռանալ այդ տեղից, փախչել: Յեվ որեցոր ալելի և ալելի վատանում եր այս քարայրի բնակիչների ապրուստը:

Խաղաղության շուրջը խորհրդի լուսավորումը

րում: Հանկարծ տեսքով չափազանց տգեղ մի ծերուկ սկսեց տխուր մըթմըթալ: Նա ասում էր, վոր անտառն ալլևա չի կարողանում իրենց կերակրել, վոր պետք է ուրիշ տեղ վորոնել, պետք է ցրվել զանազան կողմեր: Ծերուկից հետո բոլորն ել զանազան ճիշեր արձակեցին: Միքանիսն, ըստ յերևութին կանալք, ճչալով սկսեցին փաթաթել մանկիկներին մորթիների մեջ: Մյուսներն իրենք սկսեցին փաթաթվել և վերցնել իրենց միակ գույքը՝ ճեղքած ծայրին քար անցկացրած մահակը: Մի կարճ միջոցից քարայրը դատարկվեց. այնտեղ մնաց միայն մի հիվանդ՝ թողնվելով բախտի բերմունքին: Բոլոր առողջներն, առնելով յերեխաներին, դուրս յեկան քարայրից: Անտառում նրանք բաժանվեցին. միքանիսը գնացին գետի ուղղությամբ, մյուսները շարժվեցին դեպի անտառի խորքը:

Այն հեռավոր անցյալում մարդիկ կերակրվում էին միայն սպանված կենդանիների մսով: Յեվ յերկրիս վրա տեղի յեր ունենում մարդու անընդհատ կռիվը զազանների դեմ: Յեվ երբ վորսը հատնում էր, մարդիկ վորսի նոր վայրեր ելին վորոնում:

Զույցի յեվ Շարագրուքյան համար.— Ի՞նչն է ստիպում զազաններին հեռանալ մարդկային բնակություններից:

Ավստրալիայում դեռ մոտ ժամանակներս Հային շատ դատարկ, ընդարձակ տեղեր, վորոնք տարածվում էին տասնյակ կիլոմետրով: Քարքարոտ բլրակները տեղ-տեղ փոխարինվում էին մացառներով: Այստեղ զազաններ ու թռչուններ ել քիչ կա: Միայն մացառների մոտ փոքր ի շատե կենդանություն է տիրում. կամ շեշտակի վազում է հաստ անճոռնի վամբատը—կատվանման կրծող կենդանին՝ կարճ ականջներով, կամ յերևում է շերտավոր մըջարջը (муравьед) սկյուռի մեծության, և յերկար սուր դունչը ցցելով նալում է մըջնանոց, կամ սկզվում է մեծ մկան նման բանդապուտ զազանիկը, կամ թռչկոտում է մեծ վոստյուններով կենդուրան՝ հաստ, յերկար պոչով: Կենդուրայի յետի վոտները յերկու անգամ ավելի յերկար են առաջիններից. ուստի և նա կարող է առաջ շարժվել միայն վոստյուններով:

Եզ կենդուրայի փորի վրա կա մի առանձին պարկ. վորի մեջ նա կրում է իր ձագուկներին քանի դեռ նրանք փոքր են: Այս պատճառով ել կենդուրային կոչում են պարկավոր կենդանի: Նա միայն Ավստրալիայումն է լինում:

Այսպիսի մի ամալի տեղ ապրում էր Ավս-

տրալիական մի տոհմ, վոր կոչվում եր Արուն-
տա: Նա բաղկացած եր մոտավորապես չերկու
հարյուր հոգուց, հաշվելով կանանց և չերեխա-
ներին ել: Ավստրալիական մյուս տոհմերինման
Արունտա տոհմն ել միասին չեր ապրում: Նա
բաժանվում եր ութ առանձին սերունդներին՝
12-ից մինչև 30 հոգի յուրաքանչյուրը: Ընտա-
նիքը բաղկացած եր արունակցական մոտիկ ազ-
գականներից: Այսպիսի ընտանիքի աղբատիկ
գույքը՝ գազանների մի քանի մորթը, քթոցներ
ճյուղերից և ծառի կեղևներից, ոգտագործում ելին
բոլորը. միայն ղենքը պատկանում եր ամեն մի
չափահաս տղամարդուն առանձնապես և համար-
վում եր նրա անձնական սեփականություն: Ամեն
մի ընտանիք ապրում եր մյուսներից առանձին և
ամբողջ տարին թափառում եր տեղից տեղ կերա-
կուր վորոնելու: Սովորաբար ծերունիներն ելին
նշանակում տեղափոխության ժամանակը և նոր
կայանի տեղը, և ամբողջ սերունդը առանց հա-
կառակության նրանց հպատակվում եր: Յերբեմն
ել պատահում եր, վոր կարիքը ստիպում եր ամ-
բողջ տոհմին ժողովվել միասին մի ընդհանուր
գործ կատարելու:

Մի հովտում, փոքրիկ աղբյուրի մոտ տեղա-
վորված եր Ավստրալիայի Արունտա տոհմի մի
սերունդ՝ մոտ 20 մարդ. սրանք բոլորն ել մերկ

էլին, միայն մի քանիսը լայն տերևի գոգնոց
ուներին, մի հինգ հասակավոր տղամարդ նստել
էլին գետնին շրջանաձև և զրույց ելին անում:
Նրանց կողքին հավաքվել ելին կանայք, իսկ չե-
րեխաները վազվզում ելին: Այս ժամանակ մո-
տակա բլրի վրա չերեցավ մի ավստրալիացի՝
ձեռքին աղեղ: Սա շուտով չեկավ այս մարդկանց
շրջանը: Սա Արունտա տոհմի մի այլ սերնդի
պատվիրակ եր, վոր իրեն ուղարկող ծերունինե-
րի կողմից պսում եր... Արունտա տոհմը հիմա
լավ չի ապրում. անձրև չերկար ժամանակից ի-
վեր չի գալիս, արևը չորացրել ե չերկիրը և հո-
ղը չի բուսցրել ուտելու բույսեր, վորով կե-
րակրվում ենք. մինչև անգամ գազանները, թռ-
չուններն ել քշացել են: Պետք ե ամբողջ տոհ-
մը գնա արևմուտք: Այնտեղ կան ընդարձակ մա-
ցառներ, վորոնց մեջ հալանորեն կլինեն զանա-
զան գազաններ: Պետք ե ընդհանուր ուժերով
ձեռք բերենք կերակուր: Լսողները չիբեմնապես
ընդհատում ելին պատվիրակին խրախուսիչ բա-
ցական շուրթունքներով. ըստ չերեկութիւն առաջարկը
բոլորի չեւ սրտովն եր:

Յերբ պատվիրակը խոսքը վերջացրեց, սկըս-
վեց մի խորհրդակցություն, թե ում ուղարկեն
պատվիրակ հարևան սերունդների մոտ. չերը և
վորտեղ հարմար ե հավաքվել: Վորոշումներ արին
և բաց թողին առաջին պատգամավորին:

Անցաւ մեկ ու կես շաբաթ. և Արուստայի ամբողջ տոհմը, կանանց ու յերեխաների հետ, հավաքվեց վորոշված տեղը: Ամեն մի սերունդ իր համար առանձին կայան պատրաստեց անպատճառ այն կողմը, վոր կողմից վոր մտել էին հավաքման տեղը: Այս կայաններից փոքր ինչ հեռու յերևում եր խիտ մացառը: Հենց այնտեղ ել ուղում էին վորսորդութուն անել ավատրալիացիները: Յերբ ամբողջ տոհմը հավաքվել եր, սկսեցին պատրաստվել վորսի գնալու՝ ծերունիների հսկողության տակ: Տղամարդիկ միահամուռ քարե կացիններով ցախ էլին կտրտում և ցանկապատ քաշում մացառի չեզերքը մի ծայրից մյուս ծայրը: Այս ցանկապատում մի տաս տեղ անցքեր թողին, մեկ կամ մեկուկես մետր լայնության: Այսպես անցաւ յերեք ուր: Ինչին էլին սպասում. սպասում էին, վոր հակառակ կողմից քամին փչի. առանց սրան իմաստ չուներ վորսն սկսել:

Ահա և փչեց վաղուց ցանկալի քամին և բոլոր կայաններում կենդանութուն տիրեց. բարձրացաւ գոռում գոշում: Կանայք մեծ յերեխաների հետ ցրվեցին մացառների շուրջը, իսկ ծերունիները կանգնեցնում էին ցանկապատի ամեն մի անցքի մոտ 4 հոգի. 2 մեկ, 2 մյուս կողմից: Ամեն մի վորսորդ ուներ միքանի նետ:

Յերկու ժամ անցաւ հոգնեցուցիչ սպասման մեջ: Վերջապես հեռվից սկսվեց լսվել ճաթնուն և մարդկանց խուլ աղաղակներ: Մացառի վրա բարձրացան ծխի թանձր քուլաներ և բամին արագությամբ բլեց նրանց դեպի վորսորդները: Այս կանանց գործն եր, վոր մացառը վառեցին մյուս կողմից և իրենք ցրվելով մացառի շուրջը բղավում և ճչում էին բոլոր ուժով, փայտերով թրխթրխկացնում էին և չէին թույլ տալիս գազաններին իրենց կողմը գնալու: Գազանները յերկուդից ապշած մացառում իրար վրա էին ընկնում. հետևից կրակը, կողքերից մարդիկ, միայն առաջից ճանապարհը ազատ եր և նրանք բոլորը վազեցին դեպի առաջ: Սակայն ձորագլխին ելի մի նոր արգելք, այսինքն՝ բարձր ցանկապատը նեղ անցքերով: Պարզ ե վոր գազանները սկսեցին վազել դեպի այս անցքերը և այստեղ սկսվեց անողորմ կոտորած:

Յերկու շաբաթ շարունակ Արուստա տոհմը բեֆ եր անում, աշխատելով յերկարատև քաղցի տեղը լցնել: Բոլորի համար ել ուտեստ առատությամբ կար: Յեվ, յերբ կերան վերջացրին բոլոր ուտեստը, վառեցին մացառը, նոր վորսեր վորսալու, բաց այս անգամ արդեն վորս քիչ կար. շատ գազաններ առաջին վորսից հետո փախել գնացել էին:

Ավստրալիացիները կերան կշտացան, փա-
ռավորապես հանգստացան և նորից ցրվեցին զա-
նազան կողմեր, ամեն մի սերունդ առանձին:
Նրանք չեյին կարողանում մեծ խմբերով ապրել
և դժվար ել եր նրանց համար այդպես ապրել:
Կենդանիներ բազմացնել, ճաշակելի բույսեր ա-
ճեցնել նրանք չեյին սովորել և անվում եյին
միաջն նրանով՝ ինչ վոր պատրաստի գտնում
եյին բնության գրկում: Բայց ամեն տեղ ել բազ-
մաթիվ գազաններ չկան, վորոնց կարելի լինի
վորսալ, ամեն տեղ առատութեամբ չեն բուսնում
ճաշակելի բույսեր: Այս պատճառով ել Ավստրա-
լիացիները թափառում են առանձին սերունդնե-
րով և տոհմերով. նրանց համար այդպես հեշտ ե
ուտեստ գտնել: Յերկարատե բաղցը չերբեմն
նրանց ստիպում ե հավաքվել ամբողջ տոհմով և
միասին ուտեստ ճարել. բայց հենց վոր անցնում
են ծանր օրերը, ամեն մի ընտանիք սկսում ե
նորից առանձին ապրել:

Տոհմական կազմակերպութիւնը, տոհմական
կենցաղը հասուկ ե մարդկանց՝ չերբ նրանք թա-
փառական կյանք են վարում: Տոհմական կազ-
մակերպութեան մեջ, բացի ծերերի իշխանու-
թիւնից, ուրիշ իշխանութիւն չկա, ուրիշ դա-
տավորներ չկան, բացի ընտանիքի տոհմի մեծե-
րից թափառական ժողովուրդների մեջ բացի

ազգակցականից ուրիշ կապեր չկան: Նրանք պե-
տութիւն չեն կազմում:

15. ԶԵՆՔՈՎ ՅԵՎ ԸՆԾԱՆԵՐՈՎ

Դուք արդեն կարդացիք, վոր Ավստրալիա-
յում թափառում եյին, և հենց հիմա չել վորոշ
տեղեր թափառում են, կիսավայրենի ժողովուրդ-
ներ. նրանք մշտական բնակարաններ չունեն:
Ավստրալիացիները շատ նման են նախապատմա-
կան մարդուն, նրանց զենքերը քարից են, զգես-
տի մասին գաղափար չունեն և նրանց ամբողջ
կյանքը պարզ ե՝ նախնական: Նրանցից չուրա-
քանչւորն բռնում ե մի վորոշ տեղ, վորը հա-
մարում ե իրենը և ուրիշներին չի թույլ տալիս
անցնել մանելու:

Մի անգամ մի տոհմ ամբողջ ամառը թա-
փառում եր դաշտավայրում: Զմեռը կենդուրու-
տոհմի ծերունիները իրենց համար կայան ընտ-
րեցին անտառի չեզըր, ուր կարելի չեր փոքրի-
շատե պաշտպանվել վատ չեղանակին: Մի քանի
օրից հետո, ծերունիները սկսեցին շշնջալ, խոր-
հրդակցել. նրանք կանանցից ծածուկ մի ինչ
վոր բան եյին խորհում: Հետո ծերունիները վեր
կացան կայանի մեջ սկսեցին քշփշալ չերիտա-
սարդների հետ:

Խորհրդակցութեան չերկրորդ ուր Վեր կացան արևածագին, հեռացան կայանից և սկսեցին բարձր ձայնով չերգել, խսկուհի զարթնեցին մուստղամարդիկ, վերցրին գենքերը և չերգելով վագեցին դեպի ծերերը: Զարթնեցին և՛ կանայք: Այդ ժամանակ տղամարդիկ հայտնեցին կանանց, վոր գնում են ոտար չերկրից ոխրա (կարմիր կավաքար) բերելու: Նրանք սիրում էին իրենց մարմինը ներկել ոխրայով, բայց այս ներկը իրանց չերկրում չկար, ինչ վոր ունեցին արդեն գործ էին անել, իսկ մարմնի վրայի նկարները խուճացել էին:

Կանայք լացով ու վողբով սկսեցին վագել տղամարդկանց առաջ. նրանք համոզում էին ամուսիններին, բարեկամներին ու չեղբայրներին մնալ ու չգնալ ոտար թշնամական չերկիր, բայց տղամարդիկ մնացին աննկուն: Վորպեսզի չհուսահատվեն և խրախուսեն չերիտասարդներին, նրանք չերգելով շարժվեցին առաջ և շուտով անհետացան կանանց աչքերից:

Կենդուրու տոհմը չերկար գնում եր հավաքելով ճանապարհին ճաշակելի բույսեր և վորսալով կենդանիներ: Մի շաբաթից հետո, իրենց կայանից ավելի քան 200 կիլոմետր հեռու մոտեցան լեռների, ուր ապրում եր Մողեսի տոհմը: Այս լեռներում շատ ոխրա կար: Յեկվորներն

սկսեցին հավաքել ներկը, ջրի հետ խառնել և այս խմորից պատրաստել հաստ գնդեր: Այսպես ավելի հարմար եր տանել ներկը: Բայց հազիվ էին սկսել գնդել, չերը նկատեցին բլուրների վրա մարդկային դեմքեր, սրանք այդտեղի տերերն էին, Մողեսի տոհմի մարդիկը: Նրանք սկզբում հետաքրքրութամբ գնեցին կողպատողներին և հետո սկսեցին նետահարել: Կենդուրու տոհմը դադարեց ոխրա հավաքելուց և ինքն ել սկսեց նետահարել: Սկսվեց խսկական կռիվ, և այս և՛ այն կողմից ել ընկան վիրավորվածներ ու սպանվածներ: Մողեսի տոհմը չդիմացավ ու փախուստի դիմեց: Յեկվորները թշնամու չեակից չնկան, նրանք վախենում էին ավելի վերև բարձրանալ, ուր ամեն մի բլուրից սպասվում եր մի նետ, իսկ ոխրա հավաքել վախենում եր Կենդուրու տոհմը. վորովհետև աշխատանքի ժամանակ կարող էին խփել: Նրանք հավաքվեցին ու սկսեցին խորհրդակցել, թե ինչ անեն:

Նրանց խորհրդակցութունը անսպասելի կերպով ընդհատվեց: Թշնամիների կողմից մի մարդ չեկավ առանց գենքի, վորպես նշան գինադադարի, սրա չեակից դուրս չեկան ուրիշ մարդիկ, վորոնք կրում էին իրենց գլուխների վրա ոխվորոնք: Մողեսի մարդիկ դրին ոխրան մի րալի կտորներ: Մողեսի մարդիկ թագնվել: Նրանք տեսանելի տեղ, շտապեցին թագնվել: Նրանք

չգիտեցին, թե արդյոք Կենդուրու տոհմը կնդու-
նի՝ ընծաները և կկամենա հաշովել:

Հենց վոր ոխրա բերողները թագ կացան,
չեկվորները հարձակվեցան կտորների վրա: Նրանք
վերցրին ընծաները և շտապեցին ընծայել թշնա-
միներին ինչան հաշտության՝ մորթիներ, կենդու-
րայի միս, և արմատներ: Հետո նրանք հավաքե-
ցին ներկերը ու գնացին տուն: Համարյա ամեն
մեկի գլխին դրած երչերկու փութ ոխրա: Նրանք
գնում եյին միմյանց չետևից շարված, չերգում
եյին հաղթական չերգեր, իսկ նրանց չետևից տա-
նում եյին վիրավորներին:

Հենց վոր չեկվորները հեռացան, Մողեսի
մարդիկը վաղեցին գեպի ընծաները: Սրանք
նույնպես գոհ մնացին նրանց թողածից, իրանց
չերկրում կենդուրա և այդպիսի արմատներ շատ
քիչ կային, իսկ ոխրա՝ շատ: Նրանք ել գուցե
գնալին Կենդուրու տոհմի չերկիրը թալանելու,
բայց Կենդուրու տոհմը նրանց նախազգուշացրեց:

Մի ժամանակ, շատ հին անցյալում գանա-
զան չերկրների մարդիկ ել Ավստրալիացիների
նման կյանք եյին վարում: Նրանք բաժանվում
եյին բազմաթիվ մանր տոհմերի: Յուրաքանչյուր
տոհմը թափառում եր իր սիրած տեղերում և
արգելում մյուսներին: Բայց ամեն մի տեղում կար
բնության մի առանձին պարզև մի տեղերում

առատ ելին գազաններն ու թռչունները, մյուս
տեղում ճաշակելի բույսերը, չերորդում՝ ներկ
ու քար, վորից վայրենիները գենք ելին պատ-
րաստում:

Այս պատճառով մի տոհմ աշխատում եր խել
մյուսից՝ ինչ վոր ինքը չուներ: Այս մարդկանց
մեջ ընդհարում եր տեղի ունենում և կռիվը
վերջանում եր զինադադարով և ընծաների փո-
խանակությամբ:

Այդ ժամանակներում մարդկանց մեջ տեղի
չեր ունենում առևտուր: Նրանք չեյին ծախում
և գնում:

Նրանք՝ փոխանակության մասին գաղափար
չունեյին և դրան ել չունեյին, վորը անհրաժեշտ
ե այժմ առևտուր անելու համար:

Այժմ մարդիկ աշխատում են և պատրաս-
տում վոչ միայն աջն, ինչ վոր իրենց հարկավոր
ե, այլև աջն, ինչ վոր կարելի չե ծախել, վոր-
պեսզի դրանից ստացած դրամով գնեն աջն, ինչ
վոր իրենց պակասում ե:

Գյուղը և քաղաքը փախանակում են իրենց
աշխատանքների արդյունքները. մի քաղաք առև-
տուր ե անում մյուսի հետ, կատարվում ե առև-
տուր, գոյություն ունեն միջնորդներ—վաճառ-
ականներ և առևտրական միություններ: Մարդիկ
տեսնվում են, սակարկում և համաձայնության

գալիս: Գոյութիւնն ունեն շուկաներ, ապրանք-
ների պահեստներ: Կտրվում են դրամներ, տպա-
գրվում դրամանիշներ:

Մարդիկ ստեղծեցին կազմակերպութիւն-
ներ և պայմաններ, վորոնք անհրաժեշտ են մըշ-
տատե, լարված առևտրի համար, կազմակերպու-
թիւններ, վորոնք աշխատեցնում են հազարավոր,
միլիոնավոր, տասնյակ միլիոնավոր մարդիկ: Սրա-
նից և վոչ մինը չկար թափառական տոհմերի
մեջ: Կարիք չգալով առևտրի, այս ժողովուրդ-
ները չեյին միանում միմյանց հետ և ապրում
եյին առանձին, հաճախ թշնամանալով միմյանց
դեմ:



ԲՈՎԱՆԴԱՌՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Մեր ժամանակը	3
2. Խոր անցյալում	5
3. Կրակին տիրելը	9
4. Հիսուն հազար տարի դեպի լեռ	16
5. Քարալքերում	27
6. Ճյուղերից բնակարան	32
7. Թռչունների որինակով	33
8. Առանց զգեստի	38
9. Կերակուր ճարելը	41
10. Քարի դար	48
11. Ինչպիս տեղեկացան նախնական մարդկանց կենցաղի մասին	53
12. Ընդհանուր թշնամի—ընդհանուր վորս	61
13. Գազանի հետքով	63
14. Տոհմական կապ	67
15. Զենքով և ընծաներով	73



}} << Ազգային գրադարան



NL0411040

1890